Azg Ազգ

31 ՕԳՈՍՏՈՍ 2011 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 152(4770)

ISSN: 1829-1651

Նոր ռազմական արկածախնդրության դեպքում Հայաստանը չի վարանելու կրկին հակառակորդին խաղաղություն պարտադրել

Հայաստանի նախագահի խոսքով՝ արշանագրությունները քաց, անժամկետ հնարավորություն չեն

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայաստանի, Ռուսաստանի եւ Ադրբեջանի նախագահների հունիսի 24-ի կազանյան հանդիպումը յուրատեսակ փորձաքար էր հակամարտությունը խաղաղ բանակցային ճանապարհով եւ հնարավորինս արագ կարգավորելու կողմերի անկեղծությունն ու հաստատակամությունը գնահատելու համար: Ելույթ ունենալով երեկ մարզահամերգային համալիրում մեկնարկած Հայաստանի ԱԳՆ կենտրոնական ապարատի եւ արտերկրում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությունների ղեկավարների խորհրդակցությանը, ըստ պաշտոնական հաղորդագրության, այսպիսի բնութագրում է տվել Հայաստանի նախագահ **Սերժ Սարգսյանը**:

«Ամռանը հասել էինք մի կարեւոր հանգրվանի, երբ թե՛ միջնորդ երկրները եւ թե՛ միջազգային հանրությունն ակնկալում էին, որ խնդրի կարգավորման առնվազն հիմնական սկզբունքների շուրջը համաձայնության ձեռքբերումը մոտ է», ներկայացրել է երկրի նախագահը: Նրա խոսքով՝ «Ադրբեջանը Կազանում հետքայլ կատարեց՝ հրաժարվելով ընդհանուր հայտարարի գալուց եւ նոր խոչընդոտներ ստեղծելով հետագա համաձայնության համար»:

Տես էջ 8

Ինչի՞ց են զգուշացել

ՎԱՀԲԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Ադրբեջանի էխս-վարչապետ Փաշահ Հուսեյնը ընդդիմադիր հանրային պալատի նիստում հանդես է եկել նախաձեռնությամբ, որի իմաստը Թուրքիայի հետ իր երկրի համադաշնություն ստեղծելն է: Մինչ այդ էլ, իհարկե, «մեկ ազգ, երկու պետություն» կարգախոսը կար: Բայց այլ բան է երկու թուրքական պետությունը, բոլորովին այլ՝ երկու թուրքական պետությունների համադաշնությունը: Համադաշնությունն, ի վերջո, ենթադրում է պետական ինքնիշխանության որոշակի սահմանափակում: Իսկ այս դեպքում հասկանալի է, որ համադաշնության ձգտող ադրբեջանական ընդդիմությունը, եթե դա նաեւ իշխող վերնախավի տրամադրություններին անուղղակի արտահայտություն չէ, փաստորեն հայցում է Թուրքիայի՝ որպես ավելի զորեղ երկրի հովանավորությունը:

Տրամադրություններին մասին կարելի է ենթադրություն անել այնքանով, որ Փաշահ Հուսեյնի առաջարկած գաղափարն արժանացել է էխ-պետական խորհրդական Վաֆա Գուլուզադեի ծավալուն մեկնաբանությանը, որը փոխանցում է «Ենի մուսավաթ»-ը: Նա հատկապես կարեւորել է նախկին վարչապետի հետեւյալ միտքը. «Ադրբեջանն ստիպված է հենվել աշխարհաքաղաքական մի ուժի: Այդ պատճառով էլ կարծում եմ, որ հանրային պալատը պետք է ուշադրության կենտրոնում ունենա Թուրքիայի հետ համադաշնություն ստեղծելու հարցը»: Գուլուզադեն գտնում է, որ այդ գաղափարը «միշտ էլ օրակարգում է», եւ ավելացնում, որ դրա համար բոլոր հիմքերը կան՝ «միեւնույն ազգ, միեւնույն ճակատագիր եւ պատմություն», ինչից էլ բխեցնում է, որ Թուրքիա- Ադրբեջան «համադաշնությունը իրական հեռանկար է»: Գուլուզադեի գնահատմամբ՝ «համադաշնությունը հավասարազոր կլինի ՆԱՏՕ-ին Ադրբեջանի անդամակցությանը: Չորս կողմից թշնամիներով շրջապատված Ադրբեջանը ամեն տեղ վտանգների է հանդիպում: Այս տեսանկյունից, իրավիճակից դուրս գալու համար դա խիստ անհրաժեշտություն է: Թուրքիան էլ դրանից շահ ունի: Ստեղծվելիք համադաշնությունը Թուրքիային Կասպից ծով դուրս գալու աշխարհաքաղաքական հնարավորություն կընձեռի: Ադրբեջանը ոչ Անդորրա է, ոչ Լիխտենշտեյն, որոնց Եվրոպան պաշտպանում է»:

Նշանակո՞ւմ է սա արդյոք, որ Ադրբեջանում սկիզբ է առնում «արժեքների վերագնահատման գործընթաց», թե՞ Բաքվում պարզապես «թույլություն են խաղում»՝ ողորկելու համար իշխող վերնախավի իրական մտադրությունները, այն է՝ Հարավային Կովկասում «դառնալ կամք թելադրող», այս պահին դժվար է կանխագուշակել: Ամեն դեպքում, սակայն, Գուլուզադեի ասածը՝ «չորս կողմից թշնամիներով շրջապատված լինելու» մասին, կարծես թե համահունչ չէ Ադրբեջանի պետական քարոզչությանը: Մնում է ենթադրել, որ պաշտոնական Բաքուն իրոք բոլորի հետ խնդիրներ ունի, այդ թվում եւ՝ Իրանի: «Մեզ անհրաժեշտ է մշտական միություն»,- ասում է Գուլուզադեն: Իսկ դա նշանակում է, որ հարեւանների հետ լուրջ խնդիրներ ունենալով՝ Ադրբեջանը դրանք իր պատկերացրած տարբերակներով լուծելու համար պարզապես առանց Թուրքիայի հովանավորության ոչինչ անել չի կարող:

Տես էջ 2

Ձերբակալվել է Մարգար Օհանյանը

Երեկ ձերբակալվել է «Ճանապարհային ոստիկանության» ծառայության պետ, ոստիկանության գնդապետ Մարգար Օհանյանը: Ըստ հատուկ քննչական ծառայության հաղորդագրության՝ Օհանյանը ձերբակալվել է հատուկ քննչական ծառայության վարույթում քննվող քրեական գործի շրջանակներում, պաշտոնական դիրքը չարաշահելու եւ գույքի առանձնապես խոշոր չափերով հափշտակություն կատարելու կասկածանքով: Նրան կասկածում են այն բանում, որ չարաշահելով պաշտոնական լիազորությունները, Հայաստանի մարզերում ոստիկանության աշխատանքները կազմակերպելու համար իր ենթակայության տակ գտնվող առանձին վաշտերին հասանելիք եւ իրեն վստահված շուրջ 277.000 լիտր բենզինից ըստ նպատակի հատկացրել է 121.000 լիտրը, իսկ տարբերությունը՝ յուրացրել: Օգոստոսի 25-ին Հայաստանի ոստիկանապետ Ալիկ Սարգսյանը հայտարարել էր, որ ճանապարհային ոստիկանությունում վառելիքի չարաշահման բացահայտումների հետ կապված քրեական գործ է հարուցվել ու Մարգար Օհանյանի մեղավորության բացահայտման դեպքում նա օրենքով պատասխանատվության կկանչվի:

Մ. Խ.

«Կարո՞ղ ես ինձ պարտքով գումար տալ. երեխաս գնում է դպրոց»

Հ. ԱՓՅԱՆ

Այս արտահայտությունն այս օրերին կարելի է լսել ամենուր: Վաղը սեպտեմբերի մեկն է՝ ոմանց համար տոն, ավելի շատերի համար՝ հոգսեր: Դպրոցահասակ երեխայի համար այս օրերին կոշիկ կարելի է գնել 4 հազար դրամով, վերնազգեստ՝ 3 հազարով, պայուսակ՝ 4 հազարով, գրենական պիտույք՝ 3 հազարով, այս բոլոր թվերը նվազագույնն են: Եթե հավելենք նաեւ այլ ծախսեր, որոնք հաստատապես լինում են, ու ընդունենք դրանց համար նվազագույնը 3 հազար դրամ, ապա երեխային դպրոց ճանապարհելու համար՝ միայն այս ամենը ապահովելով, ծնողը ծախսում է 17 հազար դրամ: Իսկ եթե երեխան առաջին դասարանցի է, այսինքն նրան տանը անհրաժեշտ են նաեւ գրասեղան, առաջին դասարանցիների համար «խիստ նորաձեւ» դարձած բջջային հեռախոս, ապա՝ գրասեղանի համար վճարելով նվազագույնը 25 հազար եւ բջջայինի համար նվազագույնը 13 հազար դրամ, դուք ծախսում եք ուղիղ 55 հազար դրամ:

Տես էջ 3

Արցախի խորհրդարանն ընդունել է համաներման որոշումը

ԿԻՄ ՉԱԲԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

Անկախության անցած ժամանակահատվածում ԼՂՀ խորհրդարանը համաներում հայտարարել է վեց անգամ: Համաներման վերջին որոշումը Ազգային ժողովն ընդունեց երեկ՝ ԼՂՀ հռչակման 20-ամյակի առթիվ:

Արցախի նախագահի կողմից տվյալ օրակարգով արտահերթ նստաշրջան հրավիրելու վերաբերյալ առաջարկություն ԱԺ-ն ստացել էր օգոստոսի 22-ին, որը սահմանված ժամկետում քննարկվելով պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովում՝ ներկայացվել է խորհրդարանի քննարկմանը:

Համաներման նախագծի կառուցակարգն օրենսդրական մարմնում ներկայացրեց ԼՂՀ նախագահի աշխատակազմի պետաիրավական վարչության պետ Արայիկ Լազարյանը: Համաձայն նախագծի՝ առաջարկվում էր, մասնավորապես, պատժի կրումից ազատել ԼՂՀ դատարանների կողմից ազատազրկման հետ չկապված պատիժների, ինչպես նաեւ մինչեւ 3 տարի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանց, մինչեւ 5 տարի ժամկետով ազատազրկման դատապարտված 1-ին կամ 2-րդ կարգի հաշմանդամներին, մինչեւ 18 տարին լրանալը հանցագործություն կատարած անձանց, 60 տարին լրացած անձանց, Արցախյան պատերազմի մասնակիցներին եւ նրանց հավասարեցված անձանց, ԼՂՀ պաշտպանության համար զոհվածների հարազատներին, ինչպես նաեւ նրանց հավասարեցված անձանց եւ այն անձանց, որոնց նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել: Բացի դրանից՝ առաջարկվում էր կարճել ներկայումս քննվող եւ հետագայում հարուցվող այն քրեական կամ դատական գործերը, որոնցով անձինք մեղադրվում են մինչեւ 2011թ. օգոստոսի 1-ը կատարած ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործությունների համար: Պատժաչափի չկրած մասն առաջարկվում էր կրճատել որոշակի ժամկետներով, համապատասխանաբար ներառելով անզգուշությամբ հանցագործություն կատարած արցախյան պատերազմի մասնակիցներին, ԼՂՀ պաշտպանության համար զոհվածների հարազատներին ու դիտավորությամբ հանցագործություն կատարած այլ անձանց:

Տես էջ 8

Տեղեկատվական դիվերսիայի զոհերը կամ աղմուկ ոչնչից



Վերջերս երկրի լրատվամիջոցներում ակտիվորեն քննարկվում էր Գանձասարի վանքի պարսպի հյուսիսարեւմտյան հատվածի երեսպատումը, որն ամենուրեք էլ լրագրողների խնդիրը չէ: Ամեն օր մի «մասնագետ» իր «վճռական» կարծիքն էր արտահայտում, մեղադրում բարերարին, որը ստանձնել էր Գանձասարի քարհանքից բերած սրբատաշ քարով երեսպատման ծախսատար գործը: Հարցի շուրջը աղմուկ բարձրացնող մարդիկ իրենց հեռուստելույթներում պարիսպը բնորոշում էին որպես հին հուշարձան, որը կերպարանափոխելու դեպքում իբր «ՅՈՒՆԵՍԿՕ»-ն պահանվող հուշարձանների ցուցակում չի գրանցի Գանձասարի տաճարը:

Տպագիր ու օնլայն լրատվամիջոցներում գրում են, թե իբր պարիսպը երեսպատվում է կերամիկական սալիկներով, մարմարով կամ հղկած տրավերտինով, որը անտեղյակություն է: Պարիսպը իրականում դարերի ընթացքում ունեցել է տասնյակ վերակառուցումներ ու վերանորոգումներ: Բարերար Լեւոն Հայրապետյանի եղբայրը, որը ղեկավարում է շինաշխատանքները, հայտարարեց, որ այս պարիսպը 1980-ականների կառույց է: Թղթակիցը հարց է տալիս, թե այդ դեպքում թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը ինչո՞ւ թղթակիցներին չհայտնեց այդ մասին ու անմիջապես էլ փաստագրեց. «Թեմի առաջնորդը տարաձայնություններ ունի Լեւոն Հայրապետյանի հետ եւ իրեն ձեռնտու է, որ վարկաբեկվի այդ բարերարը»: Տեղեկանալով այս անիմաստ աղմուկի մասին՝ թեմի առաջնորդը լրատվամիջոցներին հայտարարեց, որ տաճարի շուրջը պարսպի կառուցման արմատները, հավանաբար, պետք է փնտրել 7-րդ դարում, քանի որ այն ժամանակ էլ այս վանքը մեծ հռչակ ուներ Հայոց աշխարհում, իսկ նման վանքերը պարսպապատվում էին: Դեռ ավելին, դրանք պաշտպանական աշտարակներ էին ունենում:

Տես էջ 4

ԱԶԳ

Ընթացիկ

Քաղցրաբլիթը տրծավ, հիմա մտրակի հերթն է

Կատարյալ անհեթեթ ամառ

Երբ երեխաները պահմտոցի են խաղում, ու նրանցից մեկին, որ թաքնվել չգիտի, երեխեին անընդհատ «թիում» են, էդ երեխան խռովում է ու ասում. «Ես ձեզ հետ չեմ խաղում»: Կանգնում է մի պատի տակ ու պռոշ արած նայում է՝ իբր չի ուզում խաղալ էդ «զռաննների» հետ, բայց իրականում շատ է ուզում: Հիմա ՀԱԿ-ն է, խռովել է, ու իբր չի ուզում «երկխոսություն» խաղը խաղալ: Տանգո, շախմատ... իսկ իրականությանն ավելի մոտը պահմտոցին է, երբ խոր թաքնված կառավարական շենքում, անհասկանալի եւ ընդհանուր հաշվով մի 25 ժամ խոսում-խոսում-խոսում են, ու մեկ էլ... թմփ, տեղ հասանք: Ի՞նչ են խոսել իշխանական եւ ՀԱԿադիր կողմերը, ի՞նչ են տվել-առել, ի՞նչ 90-70 տոկոս էր ասում Հովհաննես Իգիթյանը, ինչո՞ւ գործը չի կոտել, ո՞վ ո՞ւմ է ոտով խփել սեղանի տակից, ո՞վ է առանց զուգընկերոջ տանգո պարել, ո՞վ տանգոն չի տեսել՝ գլուխը կախել է շախմատին, ու այդպես իրար չեն բռնել, լրագրողներս չգիտենք: Ներսում լրագրող չի եղել, որ իմանանք, թե ինչու պետք եղավ ամսի 9-ի սադրանքը, ո՞ւմ պետք եկավ: Ո՞վ էր ասում՝ արահերթը որ չի լինում՝ ի՞նչ ուզենք, ու չսացավ: Մի խոսքով՝ կատարյալ անհեթեթ ամառ՝ իբր երկխոսության երեւույթով: Իրականում երկխոսող պատվիրակությունների անդամների ամառը փչացավ, եւ միայն: Իսկ այն հույսը, որ իշխանական կողմից հայտնում է Գագիկ Մինասյանը, թե ՀԱԿ-ը գուցե կվերագնահատի իր գործողությունները եւ կվերսկսի երկխոսել. երեւի՝ չէ, քանի որ ՀԱԿ-ը գնահատել եւ հասկացել է, որ անիմաստ գալիս-գնում է, արահերթ ընտրություն, մանդատների շուրջ իր բազարն էլ հետը հիմնազուրկ են. ի՞նչ մանդատ, էդ մանդատը ե՞րբ քվեով շահեց, մի քանի հազար հանրահավաքավորով երկուսուկես մանդատ որ ստանա, լավ է: Իսկ որ հանրահավաքավոր-կողմնակիցների պակաս ունի ՀԱԿ-ը՝ նույնիսկ տիկին Յովանովիչն էր դեռ 2009 թվի համար նկատել: Իսկ որ ցնցումներ է խոստանում՝ լրիվ սուտ, աղակառուցողականության տանելու ուժ ՀԱԿ-ը չունի, ո՞վ է նրա հետեւից գնում, որ ցնցում լինի:

Բայց հետաքրքրական է, որ այնուամենայնիվ՝ խռովելը խռովել են, բայց մի անկյունից աչքերը իշխանության պահվածքին է, թե՝ երկխոսության շարունակությունը իշխանության քայլերից է կախված, թե՝ Տիգրան Առաքելյանի խափանման միջոցը փոխենկտեսնենք, քաղբանտարկյալի առկայությամբ իշխանության հետ խոսելու բան չկա: Արը խախուտ, մահանա՝ կարկուտ: Իրականում ի՞նչ հարց պետք է լուծեր երկխոսությունն, այդպես էլ անհայտ մնաց: Արդյո՞ք երկխոսությունն ի վիճակի է լուծել այն խնդիրը, թե ընտրություններին քանի՞ մանդատ կարող է ստանալ ՀԱԿ-ը. եթե այո, ապա սովորական պայմանավորվածության ձեռքբերման փորձ էր կատարվածը, նախորդ նոր իշխանության գծագրում կուլիսներում՝ ընտրողներին շրջանցելով, որ առանց ՀԱԿ-ի միշտ իշխանությունն արել է, եւ սրա՛ն է, հա՞, ուզում մասնակից լինել իրեն ամենաընդդիմադիր համարող ուժը: Եթե այո՝ ողբամ զքեզ ընդդիմություն, եթե ոչ, եթե հասկացել է, որ այդպես վերջնականապես կորցնում է դեմքը եւ հետ քաշվում, ուրեմն՝ էլ ավելի ողբամ զքեզ ընդդիմություն, քանի որ սեպտեմբերի 9-ին երեք հազար մարդուց ավել «Ազատության» հրապարակ չի գա, վերջին հանրահավաքի սուղ մասնակիցների մեծ մասն էլ այս երկխոսության երեւույթով հիասթափվեց ՀԱԿ-ից՝ իրարամերժ խոսքերով ու վարքով «ամենաարմատական» ընդդիմությունից: Մի խոսքով՝ իշխանությունն ու ընդդիմությունը միասնաբար թաղեցին ընդդիմադիր դաշտը, եւ երկար ժամանակով: Ընդդիմությանը կմնա ոչ թե հանրահավաքների հույսին մնալ, այլ լոկալ ու թաքնված պայմանավորվածություններով տեղավորել իրենց սուղ մարդուժը իշխանության գծած գծի մեջ: Իսկ եթե հասարակության մեջ կուսակված որոբլեմները նոր ուժերով եւ մարդկանցով լուծելու պահանջարկ կա՝ այդ դերը կարող են գալ եւ վերցնել բոլորովին նոր մարդիկ: Այնպես որ՝ ՀԱԿ-ի ուլտիմատումներն այժմ անհասկանալի են եւ հիմնազուրկ: Հետաքրքրական է, որ հենց այս պահին են վիկիլիխյան բացահայտումները չեն խնայում եւ Հայաստանի իշխանությանը, եւ ընդդիմությանը՝ վերաբերելով իշխանության օլիգարխացված մասին, կոռումպացված համակարգերին, ընդդիմության հանրահավաքների սակավամարդությանն ու նրա լիդերի խորամանկությանը՝ քաղցրաբլիթը տրծավ, հիմա մտրակի՞ հերթն է: Երբեք չմոռանանք, Հայաստանն այն երկիրն է, որտեղ աշխատեց Արկադի Վարդանյանի ֆենոմենը, քանի որ կործանված հույսերը կարող են հարություն առնել անսպասելի ու բոլորովին նոր անուններ հետ, անգամ ժողովրդի սխալ ընտրությամբ: Իսկ դրա վրա կասկածել պետք չէ՝ տարաբնույթ ֆեյսբուքային նախաձեռնությունների ֆոնին. Մի «Պահանջում են գիտության ֆինանսավորման ավելացում» շարժում 3 հազարից ավելի ակտիվիստ էր հավաքագրել, ու նրանց խոսքն անցնում է: Նայեք՝ ինչ է դարձել համացանցի հայաստանյան տարածքը՝ իսկական եփվող ու շոգի արձակող կաթսա, որտեղ տարաբնույթ խմբեր տարբեր կրքեր են եռացնում, եւ ընթացքում ամեն կոչ էլ կարող է հնչել: Իսկ դա Լեւոն Ջուրաբյանի ասած՝ «ժողովրդի ուժ ցույց տալու» հետ ոչ մի կապ չունի՝ քանի որ Հայաստանում կան ակտիվ մարդիկ, նրանք պատրաստ են փոխել երկրում շատ բան, բայց ոչ ՀԱԿ-ի հետ հաստատես, եւ դա վտանգավոր է դառնում, քանի որ հեղափոխություն անող դրսի ուժերի պակաս չկա՝ ամեն մեկն իր խայծով ու որսալու համար աչքադրած ձկներով: Եթե այդպիսի բան լինի՝ մեղքը իշխանության վիզը, որ այդպես էլ իր մեջ ուժ չգտավ ազատվելու ժողովրդի ատելությունը վաստակած կերպարներից ու նույնացավ նրա հետ, եւ մեղքն արմատական ընդդիմությանը, որ էս քանի տարի ասում է՝ ես, ես, ես... ու դատարկ զրնգում է՝ նույնպես չկարողանալով ձերբազատվել նույնական արատավոր երեւույթներից: Եւ այս դեպքում պարզապես զարմանալի է, եթե չասենք՝ ապշելու, երբ «ամենարմատական» ընդդիմությունը Տիգրան Առաքելյանի խափանման միջոց փոխելը կարող է կշեռքի նժարին հավասար դնել՝ ազգի համար կարեւոր խնդիրներին, իսկ իշխանական կողմին կարող է մտահոգել խափանման միջոց փոխելով ՀԱԿ-ի թելադրանքի գերին չդառնալու երաշխիքը: Ողորմելի չափումներ՝ ահագնաչափ մարտահրավերների համեմատ:

Իսկ թե ի՞նչ է սպասվում սեպտեմբերի 9-ի հանրահավաքում՝ ոչ մի բան էլ տեղի չի ունենա, ՀԱԿականները կպատմեն, թե որքան վատ պահեցին իշխանությունները երկխոսական ռաունդների ընթացքում, մի լավ կբամբասեն ու կհանգստանան, իսկ Տեր-Պետրոսյանի ասած՝ «սեպտեմբերին երկխոսության հնարավորությունը սպառված կհամարեն» խոսքի լեւոնզուրաբյանական վերընթերցումը, թե սեպտեմբերը 30 օրից է բաղկացած, դա ՀԱԿ-ին ճկունություն է տալիս որոշումներ կայացնելու, իշխանությանն էլ ժամանակ՝ կողմնորոշվելու, իսկական ցուցիչ է, որ դեռ հույսը չեն կորցնում ՀԱԿ-ականները, թե իշխանությունները իրենց մունաթները տանելու են: Թե չէ՝ ի՞նչ... հանրահավաքային ճնշմամբ կկորզվե՞ն լուծումները: Հա, էլի, տե՛ս նյութի վերեւի հատվածը:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Սեյրան Օհանյանը անդրադարձել է մահացած զինծառայողի դեպքին

Տավուշի մարզի զորամասերում երեկ լրագրողների հետ ճեպազրույցում Հայաստանի պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանն անդրադարձել է անցած ուրբաթ ԼՂՀ «Եղնիկներ» զորամասում տեղի ունեցած դեպքին, երբ անգիտակից վիճակում հոսպիտալ տեղափոխված զինծառայող Աղասի Աբրահամյանը մահացել էր, իսկ նրա մարմնի փորձաքննությունը բազմաթիվ վնասվածքներ էր արձանագրել: Բայց մինչ այդ նախարարն ընդհանրապես խոսել է բանակում տեղի ունեցող միջադեպերի մասին. «Իհարկե, չենք կարող զերծ մնալ պատահարներից, տարբեր տեսակի հանցագործություններից: Ամենակարեւորը դրանց դրդապատճառներն ու հանցագործներին բացահայտելն է, եւ թե ադմինիստրատիվ, թե քրեական պատասխանատվության ենթարկելը: Յուրաքանչյուր դեպք մտահոգիչ է, անընդունելի է. կորուստները ցավալի են թե հարազատների, թե բանակի ղեկավարության համար: Ոչ մի հանցանք, ոչ մի արտակարգ պատահար անհետեւանք չի մնում... Ձգտում ենք պատահարների քանակը հասցնել մինիմումի, հրամանատարների համար հատուկ ոլան ենք կազմում, որպեսզի նման դեպքերը կանխարգելվեն, պատշտոններից ազատում ենք, պատշտոններ ենք իջեցնում, ընդհուպ քրեական գործ ենք հարուցում», ասել է նախարարը՝ կոնկրետ Ա. Աբրահամյանի դեպքի մասին նշելով. «Զինվորի վրա մարմնի տարբեր մասերում կան հետքեր: Հարուցվել է քրեական գործ, դատաբժշկական փորձաքննությամբ հաստատվել է, որ արտաքին ներգործություն է եղել: Բացահայտված է այն մարդկանց շրջանակը, որոնք կարող են այս կամ այն կերպ ազդած կամ ծեծած լինեն զինվորին»:

Մ. Խ.

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Սփյուռքի նախարարը ընդունեց Երվանդ Ազատյանին եւ Բաբկեն Մկրյանին

«Ազգ»-ի ընթերցողներին արդեն տեղեկացրել ենք, որ սփյուռքի նախարարությունը սեպտեմբերի 19-20-ը կազմակերպում է «Սփյուռքի կազմակերպությունների ներկայացուցիչների եւ համայնքների ղեկավարների» համահայկական համաժողով: Սփյուռքյան բոլոր կառույցներին ուղարկվել են հրավերներ եւ համաժողովում քննարկվելիք հարցերի մասին տեղեկություններ: Արդեն իսկ շուրջ 300 ներկայացուցիչներ տվել են իրենց մասնակցության համաձայնությունը: Ստացվում են առաջարկություններ ու լրացուցիչ տեղեկություններ սփյուռքի նախարարության համապատասխան վարչություններում:

Երեկ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանն ընդունեց ԱՄՆ-ի եւ Կանադայի Թեմերյան մշակութային միության ներկայացուցիչներ, ՌԱԿ-ի համաստեղծներ Երվանդ Ազատյանին եւ Բաբկեն Մկրյանին, որոնք սիրահոժար ընդունել են սփյուռքի նախարարի հրավերը: Ի դեպ, Բաբկեն Մկրյանն այն բարերարներից է, որ Արցախին, Ջավախքին, Գյումրիին մեծ նվիրաբերումներ անելուց զատ, հովանավորեց սփյուռքի նախարարության նախաձեռնած եւ Հայաստանի շախմատի ակադեմիայի հետ կազմակերպած Երեւանում «Շախմատի միջազգային օլիմպիադայի» պատշաճ անցկացումը: Հրանուշ Հակոբյանը մեկ անգամ եւս շնորհակալություն հայտնեց պրն Բաբկեն Մկրյանին ազգանվեր գործունեության եւ Հայաստան-սփյուռք կապերի ամրապնդման գործում ունեցած կարեւոր դերակատարման համար: Այնուհետեւ նախարարը Երվանդ Ազատյանի եւ Բաբկեն Մկրյանի հետ քննարկեց առաջիկա համաժողովի հետ կապված որոշ հարցեր, արվեցին առաջարկություններ համաժողովի օրակարգի շուրջը եւ նաեւ նախնական քննարկումների շուրջը: Հյուրերը ներկայացրին սփյուռքում ԹՄՄ-ի գործառույթներին, զարգացման ծրագրերն ու հատկապես հայապահպանության խնդրի շուրջը տարվող աշխատանքները: Հրանուշ Հակոբյանի առաջիկայում կատարելիք նոր, կարեւոր ծրագրի շուրջը՝ կապված ԱՄՆ-ում հայերի վիճակագրության, նրանց հստակ թվի, լեզվի ու գործունեությանը վերաբերող գործընթացում Երվանդ Ազատյանի կողմից արվեցին մի շարք կարեւոր առաջարկներ, որոնք նախարարի կողմից ընդունվեցին գոհունակությամբ: Նախարար Հրանուշ Հակոբյանը շնորհակալություն հայտնեց պատվավոր հյուրերին, նախարարության աշխատանքներին, ծրագրերին մշտապես աջակցելու եւ Հայաստան-սփյուռք կապերը էլ ավելի ամուր հիմքերի վրա դնելու կարեւոր գործում:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Ինչի՞ց են զգուշացել

1-ին էջից

Ընդ որում, Գուլուզադեն այդ «համադաշնության ստեղծումը» համարում է «հարյուր տարի առաջ թույլ տված սխալներն ուղղելու հնարավորություն», որին ինքը հավատում է: Ընդգծելով, որ «բոլշեւիկյան բռնազավթման ժամանակ Թուրքիան վճռական դերակատարություն է ունեցել Ադրբեջանի պետականության կարգավիճակի պահպանման գործում», Գուլուզադեն ասում է. «Վստահ եմ, որ այդ համադաշնությունը գլուխ է գալու: Անկախությունից ի վեր այդ նպատակն օրակարգից դուրս չի գալիս: Դա ցույց է տալիս, որ գաղափարը չափազանց հրատապ է»:

Նախկին պետական խորհրդականը մի շատ էական հանգամանք է մատնանշում. «1920թ. Աթաթուրքի զորքերն Ադրբեջանից դուրս են եկել պայմանով: Պայմանն այն է եղել, որ բոլշեւիկները պետք է Ադրբեջանին հարգանքով վերաբերվեն: Եթե Ադրբեջանում թուրքական զորքեր չլինեին, ռուս բոլշեւիկներն Ադրբեջանին ինքնավարություն էին տալու ընդամենը: Այսօր էլ մենք պետք է վստահ լինենք, որ եթե մի բան տեղի ունենա, Թուրքիան մեզ պաշտպանելու է»:

Խոստովանենք, որ այս վերջին դիտարկումը հատկապես հետաքրքրական է: Կա՞ իրական վտանգ, որ Ադրբեջանը կարող է կորցնել պետական անկախությունը: Եվ որտեղի՞ց է այն տեսնում նախկին պետական խորհրդական Վաֆա Գուլուզադեն: Եվ պատահակա՞ն է արդյոք, որ այդխիսի զգուշավոր մարդը, որ երկար տարիներ սպասարկում է իշխող վերնախավի շահերը, հանկարծ համերաշխություն է հայտնում ընդդիմադիր ճամբարից հնչած առաջարկությանը:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն / հեռ 529353
Համակարգչային շարուածը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի: Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

Հանրություն

ԵՊՀ է ընդունվել 693 ուսանող

Այս տարի էլ նախընտրելի է իրավաբանական ֆակուլտետը

Պետական բուհերի ռեկտորները դեռ մի քանի տարի առաջ գիտեին, որ այս ուսումնական տարում կանգնելու են լուրջ խնդիրների առաջ, որովհետեւ չեն լինելու շրջանավարտներ: ԵՊՀ ռեկտոր **Արամ Սիմոնյանի** հավաստիացմամբ՝ սպասվածից փոքր խնդիրների են հանդիպել, քանի որ տեւական ժամանակ միջոցառումներ են իրականացրել, որոնք պետք է մեղմեին հետեւանքները: Ռեկտորը գոհ է, որովհետեւ սպասվածից լավ իրավիճակ է բուհում:

Այս տարի ԵՊՀ է ընդունվել ընդամենը 693 ուսանող: Ռեկտորը թիվը շատ փոքր է համարում: Արտասահմանցի ուսանողների համար ընդունելության քննությունն ավելի ուշ է կազմակերպվելու, սակայն դա թվի մեջ էական փոփոխություն չի մտցնի: «Գուցե 30-40-ով ավելանան, ոչ շատ», «Ազդակ»-ակումբում ասում է Սիմոնյանը:

Անկախ ուսանողների թվից, այս տարի կրթահրավիրի ուսանողների պետական վարկավորման մակարդակը, ֆինանսավորումը չի նվազի: Սա թույլ կտա բուհերին ավելի վստահ նայել առաջ: Ուսանողների փոքր թիվը մեղմելու նպատակով ԵՊՀ-ի հեռակա ուսուցման համակարգում փոփոխություններ են մտցվել: Դա թույլ կտա թեթեւացնել համակարգի ծանրաբեռնվածությունը: Պարտադիր են դարձել ԵՊՀ անձնակազմի, նաեւ դասախոսական կազմի որակավորման դասընթացները:

Անկախ ուսանողների թվից՝ բուհը չի պատրաստվում ուսման վարձերը փոփոխել: Սիմոնյանը նման անհրաժեշտություն չի տեսնում եւ հավաստիացնում է, որ ԵՊՀ-ում սովորելու ուսման վարձը համարժեք է երկրի այսօրվա սոցիալական եւ տնտեսական վիճակին: Սիմոնյանը չկարողացավ պատասխանել, թե ո՞ր բուհն է առավել թանկարժեք ուսման վարձի չափով՝ ԵՊՀ-ն, թե՞ Մխիթար Հերացու անվան բժշկական համալսարանը.

կախված է ֆակուլտետից: Օրինակ՝ ԵՊՀ իրավաբանականն ամենաթանկն է՝ 700.000 դրամ մեկ տարվա համար: Ի դեպ, ուսանողների բաշխվածության առումով առաջատարը հենց այս ֆակուլտետն է: Առաջատար եռյակում են միջազգային հարաբերություններն ու հայ բանասիրությունը: Առաջին կուրս չեն ունենա ռադիոֆիզիկայի, միջուկային ֆիզիկայի ֆակուլտետները: **«Ազգ»**-ի հարցին ի պատասխան ռեկտորը հավաստիացրեց, որ կոռուպցիայի դեմ ամենօրյա պայքար է ընթանում: Բացի դրանից՝ մի քանի ամիս է՝ ԵՊՀ-ում գործում է հակակոռուպցիոն ծրագիր, իրականացվում է մոնիտորինգ: Սակայն ծրագիրը դեռեւս պտուղներ չի տվել. ռեկտորի փոխանցմամբ՝ վերջին մեկ տարում կաշառակերության համար որեւէ դասախոս չի հեռացվել:

Նոր ուսումնական տարվան ընդառաջ՝ երեկ կրթության եւ գիտության նախարարությունում տեղի է ունեցել պետական եւ ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների այս տարվա հանրապետական ընդունող հանձնաժողովի հերթական նիստը: Նիստը վարել է նախարար, հանձնաժողովի նախագահ **Արմեն Աշոտյանը**: Հաշվի առնելով առաջին կուրսեցիների սակավաթիվ լինելը եւ վերլուծելով ռեկտորների առաջարկությունները՝ ընդունող հանձնաժողովը քննարկել է չհամալրված մի շարք մասնագիտությունների գծով ուսումնական խմբերի ձեւավորման հարցը: Որոշվել է խնդրին լուծում տալ՝ հաշվի առնելով ուսանողի կարծիքը եւ օրենսդրությամբ ընձեռված հնարավորությունները: Որոշվել է ազգային փորձաքննությունների համար նախատեսված պահուստային տեղերից եզդիական համայնքի համար ԵՊՀ-ին ուսման մեկ անվճար տեղ հատկացնել:

«Հայաստանը դու ես»

Սեպտեմբերի 1-ին բոլոր առաջին դասարանցիները Անկախության 20-րդ տարեդարձի կապակցությամբ տպագրված օրագրերով կսկսեն ուսումնական տարին: Օրագիրը տպագրված է պետական դրոշի գույներով, որոնց վրա պատկերված են անկախության 20-րդ տարեդարձի տարբերանշանն ու կարգախոսը՝ «Հայաստանը դու ես»:

ՀԱՄՄԻԿ ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գյուղական դպրոցները ուսման որակով զիջում են քաղաքայիններին

Այս տարի Արցախի 229 հանրակրթական հաստատություններ կհաճախեն, նախնական տվյալներով, 22.560 աշակերտներ: Այսպիսի տվյալներ է ներկայացրել ԼՂՀ կրթության եւ գիտության նախարար **Վլադիկ Խաչատրյանը** լրագրողների հետ հանդիպման ժամանակ: Նախարարի հավաստմամբ, այս տարի ոչ մի համայնքում դպրոց չի փակվել, ընդհակառակը երեք նոր դպրոց է բացվել: Շուրջ 650 միլիոն դրամ արժողության լաբորատոր սարքավորումներ ու տեղեկատվական համակարգեր են ներդրվել դպրոցներում, նշեց Վ. Խաչատրյանը: Նրա խոսքով, ՀՀ երկրապահ կամավորական միությունը Արցախի բոլոր առաջին դասարանցիներին անվճար դպրոցական պայուսակներ է հատկացրել, իսկ ամենածավալուն բարեգործական ձեռնարկումը նոր ուսումնական ռազմավարության (ՆՈՒՌ) ծրագրի շրջանակում 1-4-րդ դասարանների աշակերտներին ագենտինահայ գործարար է. Էռնեկյանի տրամադրած համակարգիչներով ապահովելն է լինելու (**«Ազգը»** գրել է այդ մասին):

Լրագրողները հետաքրքրվեցին, թե Արցախում դպրոցաշինության ծրագրով քանի՞ նոր շենք պիտի կառուցվի եւ քանիսը վերանորոգվի: Նախարարը նշեց, որ ներկա դրությամբ կարիք կա 20 նոր դպրոցական շենքի կառուցման ու եւս 18-ի վերանորոգման: Բայց դա էլ վերջնական թիվ չէ, քանզի նոր համայնքների ստեղծմամբ՝ անհրաժեշտություն է առաջանում այդտեղ նոր դպրոցների բացման: Թեմայի շրջանակում նա ցավ հայտնեց, որ թեպետ պետության գործուն աջակցությամբ գյուղերում բարելավվում են հանրակրթարանների շենքային եւ ուսումնատեխնիկական պայմանները, սակայն ուսման որակի տեսակետից գյուղական դպրոցները զգալիորեն հետ են մնում քաղաքային դպրոցներից: Ի տարբերություն նախորդ տարիների, երբ գյուղերում դպրոցների տնօրենները ուսուցիչներին աշխատանքի էին ընդունում իրենց հայեցողությամբ, այսուհետեւ աշխատանքի ընդունումը կլինի մրցութային կարգով: Դա արվելու է մասնագետների ներուժը ճիշտ օգտագործելու նպատակով, ինչը պետք է որ խթանի ուսման որակի բարձրացմանը:

Ցավալիորեն, կաշառախտի երեւույթներ դեռեւս կան համակարգում, նշեց ԿԳ նախարարը: Կոռուպցիոն ռիսկերը երկրում նվազեցնելու խնդիրներով նույնիսկ համաժողով է անցկացվել Ստեփանակերտում՝ ԼՂՀ եւ ՀՀ գլխավոր դատախազների, այլ իրավասու կառույցների պատասխանատուների մասնակցությամբ, որտեղ քննարկվել են կաշառախտի դեմ պայքարի արդյունավետ միջոցները: Նախարարությունում նույնպես համապատասխան ծրագրեր են մշակվում, որոնցից մեկն էլ, մասնավորապես, կրկնուսուցումը օրինական դաշտ բերելն է. այսինքն՝ գործընթացը կիրականացվի դպրոցներում ու կվերահսկվի: Լրացուցիչ պարապմունքներ անցկացնող ուսուցիչը պետք է վարձատրվի, եւ պետությանն էլ սպասված եկամտից պիտի հարկ վճարվի, շեշտեց Վ. Խաչատրյանը:

ԶԼՄ ներկայացուցիչներին նաեւ հետաքրքրում էր, թե պետպատվերով դրսում սովորողները բոլորն էլ վերադառնո՞ւմ են Արցախ: ԿԳ նախարարի ներկայացրած տվյալներով, վերջին երեք տարվա կտրվածքով ՀՀ բուհերում ուսումնառությունն ավարտած արցախցի շրջանավարտների 37 տոկոսը վերադարձել է, 28 տոկոսն ուսումը շարունակում է մագիստրատուրայում, իսկ մյուսները տարբեր պատճառաբանումներով չեն վերադարձել: «Դա միայն մեր նախարարության մտահոգության հարցը չէ, պետք է մտահոգվեն առաջին հերթին այն գերատեսչությունները, որոնք մասնագետների պահանջարկ են ներկայացրել, ինչն էլ հիմք է հանդիսացել ՀՀ բուհերում համապատասխան տեղեր հատկացնելուն», ասաց նախարարը՝ հավելելով, որ ուսումնառությունն ավարտած նույն այդ շրջանավարտները երբեմն նույնիսկ վերադառնալով աշխատանք չեն գտնում տեղում:

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԻԶՆԵՍՈՒՄ

Բենուա Շինը նշանակվել է Եվրոպայում Ֆրանս Տելեկոմ-Orange խմբի գործադիր փոխնախագահ եվրոպական շուկաների համար

Երեւան, 30 օգոստոսի, 2011թ.: Բենուա Շինը, որը ներկայումս զբաղեցնում է Ֆրանս Տելեկոմի բելգիական մասնաճյուղ Mobistar ընկերության գլխավոր տնօրենի պաշտոնը, 2011թ. սեպտեմբերի 1-ից կսանձնի Եվրոպայում (բացառությամբ Ֆրանսիայի) Ֆրանս Տելեկոմ-Orange խմբի գործադիր փոխնախագահի պաշտոնը: Այս պաշտոնում նա կղեկավարի Ֆրանս Տելեկոմ-Orange խմբի ծավալած գործունեությունը Հայաստանում, Ավստրիայում, Բելգիայում, Դոմինիկյան Հանրապետությունում, Լյուքսեմբուրգում, Մոլդովայում, Լեհաստանում, Ռումինիայում, Սլովակիայում, Իսպանիայում եւ Շվեյցարիայում, որտեղ ընկերությունը միասնական ցուցանիշներով 2010թ. վերջին ունեցել է ավելի քան 60 միլիոն հաճախորդ եւ 12.5 միլիարդ եվրո շահույթ:

Նշված պաշտոնում Բենուա Շինը կփոխարինի Օլաֆ Սուանտիին, որը 2011թ. սեպտեմբերի 1-ից սանձնելու է Միացյալ Թագավորությունում Ֆրանս Տելեկոմի եւ Deutsche Telekom-ի համատեղ Everything Everywhere ընկերության գլխավոր տնօրենի պաշտոնը: Բենուա Շինն իր հետ բերում է նշանակալի փորձ հեռահաղորդակցության եւ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ինչպես սպառողական, այնպես էլ բիզնես շուկաներում: Նախքան Mobistar ընկերությունում աշխատելը Բենուա Շինն աշխատել է եվրոպական մի շարք երկրներում՝ Hewlett-Packard, Compaq, IBM Siemens-Nixdorf ընկերություններում:

Բելգիացի 45-ամյա Բենուա Շինը Նամուրի համալսարանի շրջանավարս է: Նրան շնորհվել է համակարգչային տեխնոլոգիաների մագիստրոսի եւ տնտեսագիտության ու հասարակական գիտությունների բակալավրի կոչում: Բենուա Շինը 2008թ. հունվարից զբաղեցրել է Mobistar ընկերության գլխավոր տնօրենի պաշտոնը, իսկ մինչ այդ, դեռեւս 2005թ. համալրելով Mobistar ընկերության կազմը, զբաղեցրել է ընկերության կոմերցիոն տնօրենի պաշտոնը:

Նոր՝ «Անկախություն» ավանդը «Արդշինինվեստբանկից»

Ինչպես տեղեկացանք «Արդշինինվեստբանկից», Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակի կապակցությամբ, սեպտեմբերի 1-ից դեկտեմբերի 31-ը բանկն առաջարկում է նոր ժամկետային ավանդ՝ «Անկախություն»: Ավանդն ընդունվում է բանկի բոլոր մասնաճյուղերում՝ ՀՀ դրամով տարեկան մինչեւ 13 տոկոս, ԱՄՆ դոլարով՝ մինչեւ 9 տոկոս, ռուսական ռուբլով՝ 7 տոկոս տարեկան տոկոսադրույքներով: Տոկոսագումարները, ըստ հաճախորդի ցանկության, բանկի կողմից կվճարվեն ամենամսյա կամ եռամսյա պարբերականությամբ, կամ ժամկետի վերջում:

«Արդշինինվեստբանկի» վարչության նախագահի պաշտոնակատար Կարապետ Գեւորգյանն այս առթիվ նշել է. «Արդշինինվեստբանկը», հավատարիմ մնալով գործունեության իր սկզբունքներին, կրկին բոլորին առաջարկում է շահավետ ակցիա, որն այս անգամ նվիրված է Հայաստանի Հանրապետության անկախության 20-ամյակին: Ներդնելով այս ավանդատեսակը՝ մենք հնարավորություն ենք տալիս մեր ազգաբնակչությանը կատարելու հուսալի ներդրում բանկում եւ ստանալու բարձր տոկոսադրույքներ»:

Ա. Մ.

«Կարո՞ղ ես ինձ պարտքով գումար տալ. երեխաս գնում է դպրոց»

1-ին էջից

Երեկ «Հենարան» մամուլի ակումբում հրավիրած ասուլիսին «Սոցիոմետր» սոցիոլոգիական կենտրոնի տնօրեն **Ահարոն Ադիբեկյանը** այս կապակցությամբ նկատեց. «Միջին ընտանիքի ամսական բյուջեի կեսը պահանջվում է մեկ երեխայի դպրոց ուղարկելու համար: Սա է պատճառը, որ շատ ընտանիքներ տագնապի մեջ են ընկնում, իսկ այն ընտանիքներում, որտեղ արդեն դպրոցական երեխաներ կան, ավելի դրակտիկ են գործում: Օրինակ՝ նախօրյա են գնում անհրաժեշտ պիտույքը, ձմռանը գնում են ամառային հագուստ, այսինքն՝ նախապատրաստվում են»:

Փաստորեն, երիտասարդ ամուսինները, որոնք ունեն, ասենք, երկու երեխա, ընդ որում, մեկին այս տարի պետք է ճանապարհեն առաջին դասարան, վերոհիշյալ բոլոր պիտույքները ձեռք բերելու համար, երկու երեխայի հաշվարկով, պետք է ծախսեն 72 հազար դրամ: Իսկ եթե ընտանիքում աշխատում է ամուսիններից միայն մեկը, օրինակ՝ ամսական 100 հազար աշխատավարձով, ապա... մնում է միայն պարզել, թե այդ ինչպե՞ս պետք է նման ընտանիքները թեկուզ միայն մեկ ամիս գոյատեւեն 18 հազար դրամով: Եթե հավելենք նաեւ հավանականությունը, որ այդ ընտանիքն ապրում է հիպոթեկային բնակարանում, ապա, կարծում ենք, ակնհայտ է պատճառը, թե ինչո՞ւ մեզանում շատ փոքր երիտասարդներ են ամուսնանում, առավել եւս՝ մեկից ավելի երեխա ունենում: Ինչեւէ՝ կրկին անդրադառնալով «սեպտեմբերմեկյան» թեմային, նկատենք, որ հայերիս շրջանում պակաս կարեւոր չէ՝ «ինչո՞ւ ուրիշի երեխան պետք է ունենա, իմը՝ ոչ» սկզբունքը: Այս առիթով Ադիբեկյանը նկատեց. «Շատ վատ է, որ երեխան դպրոց է գնում եւ չի ունենում այն, ինչ ունեն համադասարանցիները: Դա կարող է սթրես առաջացնել: Այսօր դա կարող է լինել բջջային հեռախոսը, ինչը շերտավորում է երեխաներին ունեւորների եւ չունեցողների»:

Իհարկե «այլ հարց է», թե առաջին դասարանցի երեխային, որը 5-6 տարեկան է, ինչի՞ն է պետք բջջային հեռախոսը, երբ նա այդ տարիքում ընդամենը խաղալիքների կարիք ունի: Եթե նրա համար, որ զանգահարի ծնողին՝ դասերը շուտ ավարտված լինելու դեպքում, ապա եւս մեկ հարց՝ իսկ ի՞նչ պետք է անի այդ պարագայում նրա մանկավարժը. չէ՞ որ հենց նա կարող է եւ պետք է զանգահարի ծնողին: Հետեւաբար, արդյոք ավելի նպատակահարմար չի՞ լինի, եթե կրթության նախարարությունն արգելի առաջին դասարանցիներին՝ դպրոց հաճախել բջջային հեռախոսով:

Այդուհանդերձ Ադիբեկյանը նկատում է, որ, նախորդ տարվա համեմատ, գնային մի փոքր նվազում է նկատվում, իսկ ինքը՝ Ադիբեկյանը, իր 11-ամյա դստերը դպրոց ճանապարհելու համար ծախսել է շուրջ 14 հազար դրամ:

Պակաս կարեւոր խնդիր չէ, հատկապես առաջին դասարանցիների համար, երեխային հոգեբանորեն նախապատրաստելը դպրոցին: Օրինակ՝ սովետական վերջին ժամանակահատվածում՝ երեխաների շուրջ 40 տոկոսը հաճախում էր մանկապարտեզ: Ինչպես նշեց Ադիբեկյանը՝ այժմ մանկապարտեզ հաճախող երեխաների թիվը կտրուկ նվազել է. «Այդ իսկ պատճառով «Սոցիոմետր» կենտրոնը պատրաստվում է հրատարակել ձեռնարկ նախադպրոցական երեխաներ ունեցող ծնողների համար: Այն հնարավորություն կտա վերջիններիս նախապատրաստվել դպրոցին, եզրափակեց Ադիբեկյանը՝ հավելելով, որ ձեռնարկը պատրաստ կլինի 1-2 տարի հետո: Հուսանք միայն, որ այն չի մնի «սեպտեմբերմեկյան» պարտադիր ծախսերի մեջ իր գերբարձր գնով, եւ միջին ընտանիքները գոնե կկարողանան ձեռք բերել:

Գուցե եկեղեցին է վերջին հույսը

Այս նորակառույց հոյակերտ եկեղեցին Ազերսանի սահմանից հեռու է ընդամենը 800 մետր: Եվ եթե մենք խոսում ենք զորեղ հայ ոգու մասին, ապա գիտենք, որ եկեղեցին նրա անբաժան մասն է, նրա հոգևոր հենարանը: Եվ հարցը գեղեցկախոսության մեջ չէ:

Գրեթե երկու հարյուրամյակ Տավուշի մարզի նախկին Շամշադինի տարածաշրջանում նոր եկեղեցի չէր կառուցվել: Եկեղեցիներ, անշուշտ, եղել են, սակայն խորհրդային տարիներին դրանց մի մասը ոչնչացվել է, կանգուն մնացածներն էլ դարձել են չգործող:

Մովսես գյուղի եկեղեցին խանդել էին բարբարոս 1937-ին. նրանից մնացել էին միայն արևելյան պատը եւ հյուսիսային կողմում կառուցված մկրտության ավազանը: Ամեն անգամ այցելելով իր հայրենի ծննդավայրը՝ մոսկվացի բիզնեսմեն Վազգեն Վանեսյանը մտածում էր՝ ինչո՞վ օգտակար լինել իր համագյուղացիներին: Ահա եւ 2005 թվականին Վանեսյանի ու նրա ընկերների նախաձեռնությամբ ու բարերարությամբ սկսվեց նոր եկեղեցու կառուցումը ավերվածի տեղում: Որոշվեց ու արվեց: Իսկ օրերս մովսեսցիներն ու նրանց հյուրերը մասնակցեցին գյուղի Ս. Աստվածածին եկեղեցու օծման արարողությանը: Օծման կարգը կատարելու համար Մայր աթոռից եկել էին միաբաններ:

Արդարեւ պահը հուզառատ էր, խորհրդալից: Դժվար էր պատկերացնել, որ չարաճնգ Ադրբեջանի հետ ամենամեծ սահմանն ունեցող տարածաշրջանը մինչ այդ գործող եկեղեցի չուներ:

- Ամենահուսադրողն այն է,- ասում է տարածաշրջանի հոգեւոր հովիվ **Արամ քահանա Միրզոյանը**,- որ եկեղեցի այցելողների հոսքը չի դադարում: Եվ որ գովեստի է արժանի, մարդիկ գալիս են իրենց ընտանիքներով:

Մովսեսի Ս. Աստվածածին եկեղեցու բացման կաղակցությամբ իր գոհունակությունը հայտնեց նաեւ Հայ եկեղեցու Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի թեմի առաջնորդ Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանը: Արբազանի համար հատկապես հաճելի էր այն պարագան, որ եկեղեցին կառուցել է իր առաջնորդած թեմի նվիրյալ զավակը՝ մոսկվաբնակ Վազգեն Վանեսյանը՝ աջակիցների հետ:

Սակայն տարածաշրջանի համար հիրավի պատմական իրադարձության ֆոնի վրա հառնում է անցանկալի մի իրողություն: Արդեն տեւական ժամանակ Բերդ քաղաքում սկսված նոր եկեղեցու շինարարության անավարտության խորհրդանիշ է վերածվել պարսպով հողակված ու անգործության մատնված վերամբարձ կռունկը: Զարմանում ես, թե ինչպես նա էլ չի կմեել իր մահկանացուն: Քաղաքում տարածված այն անառողջ խոսակցությունները, թե նման իրավիճակի մեղավորը նախկին հոգեւոր հովիվն է իր անազնիվ ֆինանսական գործողություններով, արդեն հրատարակ չեն: Սատանան նրա հետ: Տեղացիներն իրենք են իրենց պատժված զգում՝ ամեն անգամ քայլելով մեռյալ կառույցի կողքով: Տարածաշրջանում եկեղեցաշինության ոչ պատշաճ մակարդակի պայմաններում հատկապես այդ խնդրի լուծումը հոգեւոր ու կենսական պահանջ է: Մանավանդ որ եկեղեցու կառուցման ծախսերը մեծահոգաբար իր վրա է վերցրել Մայր աթոռը:

Եվ վերջապես: Թերեւս տեղին չէ հոգեւոր իրադարձությունը շաղկապել քաղաքականությանը: Սակայն լինելով սահմանամերձ Մովսեսում՝ անհնար է չնկատել գյուղի ծայրահեղ թշվառ վիճակը: Դժվար է ասել, թե եկեղեցին ինչ դեր կխաղա բնակավայրի համար ամենասուր ու ամենաաղետալի՝ երիտասարդության արտագաղթի հարցում: Բայց որ վերջինս դարձել է մեծագույն սոցիալական չարիք, ակնբախ է: Ոչ միայն Մովսեսը, այլեւ տարածաշրջանի բոլոր սահմանամերձ գյուղերը անողոքաբար դատարկվում են: Երբեմնի շեն գյուղերից՝ փարթամ այգիներով, բարեսես տներով, կենսուրախ կենցաղով, ոչինչ չի մնացել: Բազմաթիվ տների դռներին կողոպեմներ են, շատ այգիներում նույնիսկ կաթնուկ հոնը չեն հավաքում, որից թորում էին երեւի աշխարհի ամենահամեղ ու ամենաբուրումնավետ «հյուսի արաղը»: Որոշ գյուղերում միայն գիշերներն են այգիներում աշխատում ազերացի դիպուկահարների համար թիրախ չդառնալու վախից դրդված: Հիրավի անփառունակ է ժամանակակից հայ չինովնիկ կոչված երեւույթը, երբ սահմանամերձ գյուղերի բնակիչներին սոսկ տրամադրվում են «որոշ» արտոնություններ, եւ որոնք տարփողվում են որպես պետական մտածողության խորունկ դրսեւորումներ: Սահմանը չմերկացնելու համար ոչ թե պետք է գյուղացիներին տալ ինչպիսի արտոնություններ, այլ անհրաժեշտ է նրանց ազատել բոլոր հարկերից: Հավատացեք, պետական բյուջեն դրանից չի տկարանա: Ավելին, այդ տանջահար մարդկանց պետք է վճարել «հարկեր», որ նրանք չհեռանան հայրենի ծննդավայրից ու սանտեխնիկա եւ երկաթեղեն չծախեն Ռուսաստանի մայրաքաղաքի «Մոսկվորեցկի» շուկայում: Ապշում ես, երբ քաղաքի տարբեր մեգաշուկաներում լսում ես շամշադինյան բարբառը: Որտե՞ղ Մոսկվան, որտե՞ղ մովսեսցի կամ այգեշատցի գյուղացին ու նրա կոտրված ռուսերենը: Բայց ինչ, իրենք են գոյատեւում, օգնում են գյուղում մնացած ավելի հաճախ զառամյալ ծնողներին, բարեկամներին: Եթե ոչինչ չարվի, այդ սահմանամերձ բնակավայրերում շուտով չեն գտնվի ավտոմատ բռնող ջահելներ: Դպրոցների տարական դասարաններում աշակերտները դառնում են էկզոտիկա: Իսկ երբ սահմանի մյուս կողմում ազերիները վերածվում են մորեխների խառնիճաղանջ երամների:

Գուցե իրոք եկեղեցին կփրկի իրադրությունը:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա-Մովսես-Բերդ

Տեղեկատվական դիվերսիայի զոհերը կամ աղմուկ ոչնչից

1-ին էջից

Հայտնի է, որ Երեմիա կաթողիկոսը շինարարություն էր ծավալել վանքի տարածքում: Ըստ երեւույթին, նա վերակառուցել էր ձյան, անձրեւի տակ անընդհատ քայքայվող պարիսպը: Սակայն այն կրկին վնասվել էր խորհրդային տարիներին: 80-ական թվականներին պարիսպը վերանորոգել է հուշարձանների վարչությունը: 1996 թ. Պարգեւ սրբազանը ստիպված էր վերակառուցել պարիսպը: 2004 թ. Արցախի թեմը կրկին վերանորոգեց այն, քանի որ անձրեւաջրերը թափանցել էին շարվածքի արանքներն ու քանդել: Այս անգամ կղմինդրով ծածկեցին պարիսպը, որպեսզի անձրեւաջրերն այլեւս չվնասեն: Այսօրվա պարիսպը փաստորեն 95 տոկոսով քարի ու ցեմենտբետոնի շարվածք է, ուստի եւ հնադարյան հուշարձան համարել ոչ մի կերպ չենք կարող:

Եթե խոսքը պարսպի հնաոճ տեսքի պահպանման մասին է, ապա այդ մասին եւս ավելորդ է խոսել: Ոճական առումով, ըստ իս, բարեգործ Լեւոն Հայրապետյանի ձեռնարկը ճիշտ է, քանի որ նույն հանքաքարով կրկնում է տաճարի ու գավթի սրբատաշ շարվածքը: Դա հարյուրավոր տարբերակներից մեկն է, գուցե եւ ամենաթանկը, որի վրա կանգ են առել բարերարն ու թեմի առաջնորդը: Այն «անգրագետ հայրենասիրություն» համարելը դիտավորություն է: Իսկ Գորիսից գլխարտ բերելու, գորիսյան պատնեշների ոճով շարելու առաջարկությունն իրոք «անմիտ հայրենասիրություն» է:

Ինձ հետաքրքրեց նաեւ ՀՀ վերականգնող ճարտարապետների ասոցիացիայի նախագահ Գագիկ Սողոմոնյանի ելույթը: Նա հայտնում է, որ խորհրդային օրերին, 1989 թ. պատվիրվել եւ մշակվել է Գանձասարի վանքի վերակառուցման նախագիծը: Հուշարձանագետը առաջարկում է Գանձասարի վիճահարույց պարիսպը քանդել, բոլոր քարերը համարակալել եւ վերաշարել: Կարծում եմ, որ պարսպի մեջ միլիոնավոր փոքր չափի քարեր կան, որոնց վրա վեցանիշ թվեր տեղադրելն էլ անհնար կլինի: Ապա պարոն Սողոմոնյանն առաջարկում է կրկին վերավաճառել այդ նախագիծը եւ այդ նախագծով նորից կառուցել պատը: Ասոցիացիան դեռեւս ՅՈՒՆԵՍԿՕ-ին չի դիմում, բայց պատրաստվում է հացադուլ անել պարսպի տակ: Քանի որ Հաագայի դատարանն ու ՅՈՒՆԵՍԿՕ-ն լուրջ չեն վերաբերվի նման դիմումին, խորհուրդ կտայի դիմել Իլհամ Ալիեւին, որը կգա եւ սիրով մի քանի օրով կմիանա պատային հացադուլին:

Իսկ իմ կարծիքով այդ պատնեշը խանգարում է դեպի վանական համալիրը բացվող տեսարանին: Սակայն դա իմ սուբյեկտիվ կարծիքն է: Բուն պատն ու նրա շարվածքի ոճը այստեղ միայն առիթ են այլ նպատակներ հետապնդող աղմուկ բարձրացնելու համար:

Պարգեւ սրբազանն ու մյուսները իրենց ելույթներում տասնյակ օրինակներ բերեցին: Մայր աթոռ Էջմիածնի պարիսպները հին էին, սակայն հարիր չէին Մայր տաճարին: 60-ականներին քանդեցին եւ կառուցեցին սրբատաշ տուֆով: Այսօր ո՞վ է խոսում նրա ոճի անհամապատասխանության մասին: Ի՞նչ է, Հռիփսիմեի, Շողակաթի, Գայանեի, Գեղարդավանքի, Խոր Վիրապի տաճարների շուրջը կավաշեն պատե՞րը պետք է պահպանվեին: Տասնյակ օրինակներ կարելի է բերել եվրոպական, ռուսական սրբավայրերից, որոնց հին պատնեշները փոխարինում են նորերով, նրանց մոտ ժամանակակից հյուրատներ կառուցում: Կիեւ-Պեչորյան Մայրավանքի 12 մ երկարության պատնեշի շուրջը մի քանի տարի շարունակ վիճում էին ճարտարապետները, մինչեւ փլուզվեց: Հայտնի է, թե որքան ձգձգվեցին Տաթեւի վանքի վերականգնման աշխատանքները: Հատակը գրանիտապատեցին, որն անհամապատասխան է համալիրի շինություններին: Սակայն Մայր աթոռը համբերությամբ լռեց: Մեկ այլ օրինակ: Հուշարձանների վարչության մասնագետները Արցախի թեմին առաջարկեցին վերանորոգել Հեր-Հերի 7-րդ դարի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու վեղարը: Նրանք ամբողջությամբ քանդեցին վեղարը: Սակայն Արցախում քաղաքական իրավիճակը շիկացավ, ու մասնագետները հուշարձանը թողեցին քանդած վիճակում եւ հեռացան: Շուտով փլուզվեց եկեղեցու ողջ տանիքը: Արցախի թեմը չբողոքեց հուշարձանների պահպանության վարչության դեմ: Գարեգին 2-րդ կաթողիկոսը արցախյան իր շրջագայության ժամանակ Արցախի թեմի եւ բնակիչների խնդրանքով համապատասխան միջոցներ տրամադրեց գոնե այս վիճակում տանիքով ծածկի տակ առնելու եւ հինավուրց հուշարձանը փրկելու հետագա կործանումից: «Մոսկվա» ամառային կինոթատրոնի տեղում երեւանյան հրաշալի տաճարներից մեկի՝ Պողոս-Պետրոս եկեղեցու վերականգնման խնդրում լրատվամիջոցների աղմուկը խանգարեց սրբագրելու մեր նախնիների մեղքը: Իհարկե, վաղը այդ տեղում մեր երկրի օլիգարխներից մեկը բարձրահարկ շենք, ռեստորան կամ հյուրանոց կտեղադրի, ու լրատվամիջոցները կլռեն: Օրերս նույն լրատվամիջոցներում մի նոր աղմուկ է ձեռնարկվել Սանահինի վանքի տաճարի պատի ճեղքվածքի հարցի շուրջը: Այն ուսումնասիրում են գերմանացի մասնագետները, որոնք աշնանը կտան իրենց եզրահանգումը: Իսկ լրատվամիջոցների աղմուկը, որն ուղղորդված է մշակույթի նախարարության եւ կաթողիկոսի դեմ, ուղղակի երկրում մթնոլորտը շիկացնելու միտում ունի:

Գանձասարի պարիսպը դրսի կողմից, երեսպատման աշխատանքների դադարեցումից հետո:

Ինտերնետային այս հախուռն հարձակումների, բազում նյութերի հեղինակներին հարց եմ տալիս. ո՞ւմ դեմ է ձեր պայքարը՝ բարեգործ Լեւոն Հայրապետյանի՞, Պարգեւ սրբազանի՞, ՀՀ պետականությա՞ն, եկեղեցո՞ւ, հուշարձանների վարչությա՞ն..., կարո՞ղ եք կոնկրետացնել: Պատասխանն անսպասելի էր. «Մեզ հանձնարարված է աղմուկ բարձրացնել, ձգձգել քննարկումները, ամեն անգամ մի նոր մարդ պետք է ելույթ ունենա: Կարեւոր չէ, թե ինչ կասի: Ուղղակի հարցը պետք շիկացնել»: Սակայն եւ արդեն նկատելի է դառնում թեմի առաջնորդի ու բարերարի դեմ հարձակումների ուղղվածությունը:

Բարերարի խնդրով դիմեցի Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանին, որը պատմեց հայտնի գործարար եւ մտավորական Լեւոն Հայրապետյանի տասնյակ բարեգործական ձեռնարկների մասին: Շուրջ 20 կմ երկարության նրա կառուցած ասֆալտապատ ճանապարհով Գանձասարի վանքը կապել է Հյուսիսհարավ մայրուղու հետ: Վանք գյուղում հիմնել է մանրափայտի ժամանակակից գործարան, երկու հյուրանոց, դպրոց, հիվանդանոց, մանկապարտեզ, այժմ Սուվորովյան ռազմական դպրոց է կառուցում: Հարյուրավոր աշխատատեղեր է բացվել խաչենի ենթաշրջանում, դադարել է արտահոսքը: Լեւոնի հայրենի գյուղում բարեգործական մղումը իր խորքում մայրական կողմից Հասան-Ջալալյան իշխանական տոհմի ժառանգորդը լինելու արմատներն ունի: Իսկ լրատվամիջոցները չպետք է խանգարեն նրա հայրենասիրական ձեռնարկներին: Լրատվամիջոցներում գրում են, թե բարերարը որոշել է անջատել վանական համալիրի գիշերային լույսերը, որը չի համապատասխանում իրականությանը: Իրականում բարերարը ափսոսանք է հայտնել պատնեշի շուրջը եղած նման աղմուկի համար: Ընդհանրապես, Հայաստանում անհոգ են ապրում այն մարդիկ, որոնք իրենց կյանքում ոչինչ չեն ձեռնարկում: Գիտեմ մարդկանց, որոնք ՀՀ երեք նախագահների ժամանակահատվածներում պասիվ են եղել, ուստի եւ մնացել են իրենց պաշտոններում, իսկ ակտիվ, հանուն համընդհանուր բարորության, երկրի զարգացման համար պայքարող մարդիկ դուրս են մղվել եւ հալածվել:

Երբ տեսնում ենք մեկ այլ հայտնի բարերարի՝ Ռալֆ Յիրիկյանի դեմ լրագրողական հետեւողական հարձակումները, արդեն սկսում ես նման մոտեցման այլ արմատներ որոնել: «Վիվասելի» տնօրենը իր գործունեությամբ բարեգործական նոր մշակույթ է արմատավորում Հայաստանում: Նա նաեւ ցույց է տալիս, որ, ընդհանրապես, խոշոր գործարարների եկամուտների մի մասը ժողովրդինն է, որը բաշխման անկատար համակարգի պատճառով զրկվել է դրանք ստանալու իրավունքից: Հայրենանվեր այս գործարարը իր նպատակային բարեգործությամբ այն վերադարձնում է երկրին: Իհարկե, ինչպես համոզվել ենք բազում դեպքերում, բարերարին վիրավորելն ու խրտնեցնելը հեշտ է: Հարյուրավոր բարերարներ, գործարարներ, վիրավորվելով, այսօր խուսափում են ՀՀ-ում կամ ԼՂՀ-ում ներդրումներ կատարելուց:

Սակայն Գանձասարի պարսպի հարցի արհեստական շիկացման մեջ ես միանգամայն այլ բան էլ եմ տեսնում: Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը հուլիսի 12-ին կառավարության նիստում ունեցած ելույթում հայտարարեց, որ անցած կիսամյակում Հայաստանի Հանրապետությունը ընդամենը լքել են 70 հազար մարդ: Մինչեւ 2020 թ. ՀՀ բնակչությունը կկազմի մեկ միլիոն մարդ, իսկ Ադրբեջանական Հանրապետության բնակչությունը կկազմի 11 միլիոն մարդ: Այսինքն, ՀՀ բնակչության նվազեցումը մեր հարեւանների կարեւորագույն նպատակներից է, որի իրականացման համար մշակվում եւ իրականացվում են բազմաթիվ ծրագրեր, որոնցից են տեղեկատվական պատերազմի բազմաթիվ ձեւերը, տեղեկատվական դիվերսիաները: Այս ուղղությամբ մեր ոխերիմ հարեւանների նպատակաուղղվածությունը ավելի ցայտուն բացահայտվեց ԱՀ արտգործնախարարի ելույթում: Նման դիվերսիաների արդյունքի են «ղարաբաղցի»-«հայաստանցի», «սա երկիր չէ» հորինված ու մեր ժողովրդի երկու հատվածներին պարտադրված քայքայիչ գաղափարները: Գանձասարի վանքի պարսպի հարցը ուռճացնելը եւս թշնամական դիվերսիայի հետեւանք է, ու լրատվամիջոցները, նրանց խմբագրերը, մասնագետները պարտավոր են զանազանել «թացը չորից» ու թշնամու տեղեկատվական դիվերսիոն ծուղակում չհայտնվել:

Բայց եւ ասում են՝ թշնամին տնից է, ինչը ավելի սարսափելի է ու ավելի վտանգավոր, որովհետեւ չի երեւում:

ԲԱԿՈՒԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Արձակագիր, հրապարակախոս,
«Շուշի» ԲՀ նախագահ

Սիրիայի պարագայում ուժերի հավասարակշռությունը այլ բնույթի է, քան Լիբիայում

Արևմուտքը Ասադի վարչակարգին փորձում է տապալել պատժամիջոցներով, այլ ոչ թե ռազմական գործողություններով

Թեեւ Լիբիայի նախագահ Մուամմար Քադդաֆիի ծննդավայր Սիրտ քաղաքը շարունակում է դիմադրել ապստամբներին, սակայն իշխանությունը երկրում գրեթե ամբողջությամբ անցել է Անցումային ազգային խորհրդին: Այդ ընթացքում Ալժիրում են ապաստանել Քադդաֆիի կինը՝ Սաֆիեն, դուստրը՝ Այշեն եւ որդիները՝ Հանիբալն ու Մուհամմեդը, իրենց ընտանիքների հետ: Ի դեպ այդ մասին օգոստոսի 29-ին հայտարարել էր Ալժիրի արտգործնախարարությունը:

Այլ կերպ՝ կանխորոշված է Քադդաֆիի, որի հետ նաեւ նրա ջախջախված վարչակարգի ճակատագիրը: Դա ինքնաբերաբար կհանգեցնի Լիբիայի քաղաքական ճակատագրի կանխորոշմանը, նա այլեւս կդադարի լինել հակաարեւմտյան դիմադրության պատվարը Հյուսիսային Աֆրիկայում, եւ ամբողջությամբ կանցնի Արեւմուտքի վերահսկողության տակ, որպայլ լինելու պատճառով «քաղցր» կոչվող նավթի հարուստ պաշարներով հանդերձ:

Երկրում, ինչ խոսք, կհռչակվեն ժողովրդավարական կարգեր, սակայն բռնատիրությունից ժողովրդավարության անցումը, ինչպես ենթադրում են արեւմտյան ամենալավատեսական դիտորդները, կտեւի առնվազն 10 տարի: Այդ ժամանակահատվածում անկայունությունը մշտական գործոն կդառնա Լիբիայում, ընդ որում ոչ թե անխուսափելիության, այլեւ երկրում Արեւմուտքի անվերապահ ազդեցության տարածման անհրաժեշտ նախապայմանը լինելու պատճառով:

Արեւմուտքի խնդիրը Լիբիայում ժողովրդավարությունը չէ, այլ երկրում արեւմտյան կողմնորոշում հակառակորդ Քադդաֆիի վարչակարգի չեզոքացումը: Հատկանշական է, որ Քադդաֆիին սեփական ժողովրդին կոտորելու մեջ մեղադրող, իշխանության պարտքնությամբ պատճառաբանությամբ երկրից նրա հեռացման անխուսափելիությունը ի սկզբանե մատնանշող Արեւմուտքը ավելի քան մեկ շաբաթ ցուցարարներին ինքնաթիռներով ռմբակոծեց, որ ժողովրդական զանգվածների ճնշմամբ Սաուդյան Արաբիա փախած Ալի Աբդուլլահ Սալեհը վերադառնա Եմեն, կարծես Եմենի պարագայում բռնապետն արդեն ժողովուրդը լիներ: Էլ չենք խոսում Բահրեյնի մասին, որտեղ սուլթանի բռնապետությունը պահպանելու համար սաուդյան զորքերը գնդակահարել էին խաղաղ ցուցարարներին:

Դեռեւս ՆԱՏՕ-ի հակալիբիական գործողությունների սկզբին «Ազգ»-ում գրել էինք, որ Լիբիայում փորձարկվում է սիրիական սցենարը: Հիրավի ծանր կացության մեջ է հայտնվել նախագահ Բաշար Ասադի վարչակարգը: Պաշտոնական Վաշինգտոնը, ի դեմս նախագահ Բարաք Օբամայի եւ պետքարտուղար Հիլարի Քլինթոնի, պատրաստ է համարում նաեւ Ասադի իշխանությունը, պաշտոնից հրաժարվելու եւ երկրից հեռանալու պահանջներով: Վաշինգտոնի օրինակին են հետեւում Եվրոմիության այնպիսի առաջնակարգ երկրներ, ինչպիսիք են Ֆրանսիան, Գերմանիան եւ Մեծ Բրիտանիան: Նրանց է միանում նաեւ ՄԱԿ-ը: Նույնիսկ Ասադին մեղադրում է սեփական երկրում մարդկության դեմ հանցագործություն կատարելու մեջ, բայց ոչ ավելին:

Որքան էլ նախագահ Ասադի տապալումը Սիրիայում արեւմտամետ վարչակարգի հաստատման հեռանկարներ բացի ԱՄՆ-ի եւ ԵՄ-ի առջեւ, մեծացնի երկիրը Արեւմուտքի ուղեծրի մեջ ներքաշելու, ինչպես նաեւ իրանա-սիրական ռազմավարական դաշինքը չեզոքացնելու, թեեւ դրանով էլ Իրանին տարածաշրջանային երկրների աջակցությունից զրկելու միջոցով տարածաշրջանում լիարժեք մեկուսացնելու ամերիկյան վաղեմի երազանքն իրականացնելու հավանականությունը, այնուամենայնիվ, Սիրիայի պարագայում ուժերի հավասարակշռությունը ռուսական, չինական եւ իրանական գործոնների պատճառով բոլորովին այլ բնույթ է կրում, քան Լիբիայում:

Տվյալ դեպքում խոսքը Սիրիայի նկատմամբ ռազմական գործողությունների կիրառումը մերժելու ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամներ Ռուսաստանի եւ Չինաստանի դիրքորոշման մասին է: Ավելին, այս երկու գերտերությունների հակադրման պատճառով ՄԱԿ-ը, մեղադրելով հանդերձ նախագահ Ասադին մարդկության հանդեպ հանցագործություն կատարելու մեջ, առ այսօր պաշտոնական Դամասկոսին դատապարտող որեւէ որոշում չի ընդունել: Այսինքն Բաշար Ասադին հասցեագրված ինչպես ՄԱԿ-ի, այնպես էլ ԱՄՆ-ի ու ԵՄ-ի հայտարարությունները Սիրիայի համար ոչ թե պարտավորեցնող են, այլ ընդամենը միջազգային ճնշման միջոց:

Նույնը վերաբերում է պատժամիջոցների դիմելու Վաշինգտոնի որոշմանը, որը Սիրիայի հարցում մինչ այդ լռություն պահպանող ԵՄ-ի առաջնակարգ երկրներին ընդամենը տվեց Ասադի վարչակարգին հայտարարությամբ դատապարտելու հնարավորություն: Այս որոշման իմաստը կայանում է նախագահ Ասադին եւ նրա վարչակարգին պատժամիջոցներով տապալելու մեջ:

Դա կիաջողվի՞ ԱՄՆ-ին ու ԵՄ-ին, ցույց կտա ժամանակը: Բայց որ ռուսական եւ չինական գործոնը միջազգային այս ուժերին զրկում են Լիբիայի սցենարը նաեւ Սիրիայում բեմադրելու հնարավորությունից, ակնհայտ է: Ըստ երեւույթին, Ռուսաստանն ու Չինաստանը հետամուտ կլինեն Սիրիայի դեմ ռազմական գործողությունները բացառելու իրենց դիրքորոշմանը, որովհետեւ Ասադի վարչակարգի փոխարինումը արեւմտամետ վարչակարգով նրանց կզրկի տարածաշրջանում ունեցած ներկայությունից:

ՀԱԿՈԲ ՉԱՔԲԱՆ

Եմենի նախագահական ընտրությունները՝ նոյեմբերին

Եմենում նախագահական ընտրությունները անցկացվելու են ամենաուշը 3 ամիս հետո, հաղորդում է Ռոյթեր գործակալությունը: Այդ մասին գործակալության թղթակցին պատմել են Եմենի քաղաքական շրջանակներում: Տվյալ հարցի շուրջը ընդդիմության ներկայացուցիչները համաձայնության են եկել երկրի ղեկավար Ալի Աբդուլլահ Սալեհի հետ: Մինչեւ ընտրությունների անցկացումը նախագահի պարտականությունները կշարունակի կատարել նրա տեղակալ Աբդուռաբա Մանսուր Խադին:

Եմենի պաշտոնական լրատվական գործակալությունը տարածել է Ալի Աբդուլլահ Սալեհի հայտարարությունը, որտեղ մասնավորապես ասվում է, որ «նախագահի համընդհանուր, անմիջական եւ ազնիվ ընտրությունները անցկացվելու են ամենասեղմ ժամկետներում»:

Եմենում 2011-ի հունվարից անցկացվում են զանգվածային հակակառավարական ցույցեր, որոնց մասնակիցները պահանջում են 1978-ից երկիրը կառավարող նախագահ Ալի Աբդուլլահ Սալեհի հրաժարականը: Հունիսի 3-ին մայրաքաղաք Սանայում իր նստավայրի գնդակոծության ժամանակ ծանր վիրավորված նախագահ Սալեհը մինչեւ օրս բուժվում է Սաուդյան Արաբիայում: Բուժման ժամանակամիջոցում նախագահի պաշտոնակատար է նշանակված փոխնախագահ Աբդուռաբա Մանսուր Խադին:

Թռչնագրիպի տարածման նոր վտանգ

ՄԱԿ-ի մասնագետները ահազանգում են, որ Վիետնամում եւ Չինաստանում արձանագրվել է թռչնագրիպի H5N1 վիրուսի նոր տարատեսակ, որն առավել կայուն է ներկայումս գոյություն ունեցող պատվաստանյութերի նկատմամբ: Փորձագետներն ասում են, որ թռչունների չուն կարող է աշխարհում այդ վտանգավոր հիվանդության նոր համաճարակ առաջացնել, հաղորդում է ABC հեռուստաընկերությունը:

Վտանգի գոտում են Իսրայելը, պաղեստինյան տարածքները, Ռումինիան, Բուլղարիան, Նեպալը, Մոնղոլիան, Ռուսաստանը: Վիրուսի փոխակերպման մասին անցյալ շաբաթ տագնապահարույց հաղորդումներ էին ստացվել Կամբոջայից: Այնտեղ օգոստոսի 14-ին մահացած 6-ամյա աղջնակը 2011-ին Կամբոջայում այդ հիվանդության 8-րդ զոհը դարձավ:

Փորձագետներն ասում են, որ H5N1 վիրուսի նոր տարատեսակի գլխավոր վտանգներից մեկն այն է, որ ներկայումս դրանով վարակված ընտանի թռչունների միսը Ասիայից արտահանվում է աշխարհի բազմաթիվ երկրներ: Սենդի համաշխարհային կազմակերպության ներկայացուցիչները պնդում են, որ անհրաժեշտ է խստիվ վերահսկել Չինաստանից եւ Վիետնամից արտահանվող մսի որակը:

Մ. ՆԱՀԱՆԳԵՐ

Բոստոնում ձերբակալվել է Օբամայի հորեղբայրը



Բոստոնի ոստիկանությունը հարբած վիճակում ավտոմեքենա վարելու համար ձերբակալել է նախագահ Բարաք Օբամայի հորեղբորը, հաղորդում է CBS հեռուստաալիքը: Սպիտակ տունը հաստատել է Օբամայի ազգականի կալանավորման փաստը:

67-ամյա Օնյանգո Օբաման՝ նախագահի հոր խորթ եղբայրը, կալանքի տակ էր առնվել օգոստոսի 24-ին Բոստոնի արվարձան Ֆրեյմինգհեմում այն բանից հետո, երբ նրա մեքենան փաստորեն մխրճվել էր ոստիկանության պարեկային ավտոմեքենայի մեջ: Դեպքի վայրում ոստիկանների անցկացրած ստուգումները ցույց էին տվել, որ Օնյանգո Օբաման հարբած վիճակում է:

Դատարանի նախնական նիստում նախագահի հորեղբորը գրավի դիմաց ազատ արձակելու խնդրանքը մերժվել է: Դատարանը վճռել է Օնյանգո Օբամային կալանքի տակ պահել այն կապակցությամբ, որ ԱՄՆ-ի ներգաղթի իշխանությունները նրան ձերբակալելու կարգադրություն էին արել: Նրանց կարծիքով նախագահի հորեղբայրը ապօրինաբար է գտնվում է ԱՄՆ-ի տարածքում եւ պետք է արտաքսվի հայրենիք՝ Քենիա:

CBS-ի տվյալներով, դատական լսումների ժամանակ Օնյանգո Օբամայի շահերը ներկայացրել է փաստաբան Մարգարետ Վոնը, որը 2010-ից նախագահ Օբամայի հորաքույր Զեյթունի Օնյանգոյին օգնել էր օրինականացնել իր ներկայությունը ԱՄՆ-ի տարածքում:

Զեյթունի Օնյանգոն ԱՄՆ նախագահի հոր հարազատ քույրն է եւ Քենիայից 2000 թ. ԱՄՆ է մեկնել ժամանակավոր կեցության իրավունքով: Նա ճանիցս փորձել է փախստականի կարգավիճակ ձեւակերպել, բայց մերժում է ստացել: 2004-ին ներգաղթի ծառայությունները հերթական մերժումից հետո Զեյթունի Օնյանգոյին խնդրեցին թողնել երկիրը, բայց նա մնաց ԱՄՆ-ում: 2008-ին Օբամայի նախագահական արշավի ժամանակ ԱՄՆ-ի տարածքում նրա հորաքրոջ անօրինական կեցության փաստը լայն արձագանք գտավ: Օբամայի նախագահ դառնալուց հետո Զեյթունի Օնյանգոյի գործով սկսվեց նոր քննություն, որն ավարտվեց փախստականի կարգավիճակի տրամադրմամբ:

Լիբիացի ապստամբները սպանում են սեւամորթներին

Քադդաֆիի ընտանիքը տարագրվել է

Տրիպոլիից Մուամմար Քադդաֆիի հեռանալուց հետո լիբիացի ապստամբները ձեռնարկել են էթնիկական զտումներ: Ոչ պաշտոնական տեղեկությունների համաձայն, նրանք աջ ու ձախ սպանում են երկրում գտնվող սեւամորթներին: Այդ մասին հայտարարել է Աֆրիկյան միության հանձնաժողովի նախագահ Ժան Պինգը:

Ասուլիսի ընթացքում նա հաղորդում է, որ ապստամբները սեւամորթ տեսնելիս չեն էլ փորձում ներգաղթյալ բանվորներին տարբերել Քադդաֆիի կողմից կռված վարձու զինծառայողներից: Խռովարարների դեմ մարտնչող լիբիական բանակի էական մասը կազմում էին նեգր վարձկանների այսպես կոչված «սեւ էսկադրոնները»: Ներկայումս հենց սեւամորթների ցեղասպանության պատճառով Աֆրիկյան միությունը ապստամբների Անցումային ազգային խորհուրդը չի ճանաչում որպես Լիբիայի օրինական իշխանություն, նշում է ՌԵՔ գործակալությունը:

Լիբիայում հումանիտար իրավիճակը չափազանց ծանր է: Խոշոր քաղաքներում, այդ թվում մայրաքաղաք Տրիպոլիում, պարենի եւ խմելու ջրի հետ կապված լուրջ բարդություններ կան: Խանութների մոտ երկար հերթեր են գոյանում, մթերքների գները մի քանի անգամ բարձրացել են:

Ֆրանսպրեսը հաղորդում է, որ Քադդաֆիի կինը, դուստրը եւ որդիներից երկուսը օգոստոսի 29-ին Լիբիայի հարավում գտնվող սահմանային անցակետով տարագրվել են Ալժիր:

Լիբիայի անցումային կառավարության լրատվության նախարար Մահմուդ Շամմամը երեկ հայտարարել է, որ Ալժիրը Քադդաֆիի տարագիր ընտանիքին հնարավորություն է տվել մեկնել ուրիշ երկիր: Ըստ նախարարի, Ալժիրը Քադդաֆիի հարազատներին ապաստան էր տրամադրել «մարդասիրական նկատառումներով»: Խոսքը Քադդաֆիի կին Սաֆիայի, դուստր Այշայի եւ որդիներ Մոհամմեդի եւ Հաննիբալի մասին է: Լիբիայի ԱԱԽ-ն հայտարարել էր, թե Ալժիրի իշխանություններից կպահանջի արտաքսել Քադդաֆիի ընտանիքը: Սակայն դժվարությունն այն է, որ Ալժիրը մինչեւ օրս ԱԱԽ-ն չի ճանաչել Լիբիայի օրինական իշխանություն:

Անձամբ Մուամմար Քադդաֆիի գտնվելու վայրը ստույգ հայտնի չէ: Լիբիացի բարձրաստիճան դիվանագետների վկայակոչելով՝ իտալական լրատվամիջոցները պնդում են, թե Քադդաֆին որդիներից մեկի՝ Սաադիի հետ թաքնվում է Բանի-Վալիդ քաղաքում (Տրիպոլիից 100 կմ հարավ): Իսկ International Business Times թերթը պնդում է, թե Քադդաֆիին հաջողվել է փախչել Զիմբաբվե: Հարարեի օդանավակայանում, ինչպես նաեւ նախագահ Ռոբերտ Մուգաբեի կալվածքում ոմանք իբր տեսել են նրան: Այդ լուրերը հաստատել են նաեւ Զիմբաբվեի ընդդիմության ներկայացուցիչները: Ենթադրվում է, որ Քադդաֆիին Հարարե են հասցրել Զիմբաբվեի օդուժի ինքնաթիռով: Որոշ տեղեկությունների համաձայն, Քադդաֆիին հատկացված առանձնատունը պաշտպանում են նրա կին գվարդիականները:

Ռուսաստանը պահանջել է Քադդաֆիի կառավարության սառեցված հաշիվներից ԱԱԽ-ին հատկացվող միջոցներն օգտագործել բացառապես մարդասիրական նպատակներով: ՄԱԿ-ում ՌԴ մշտական ներկայացուցիչ Վիտալի Չուրկինը այդ պահանջն արտահայտել է ՄԱԿ-ի ԱԽ նիստում, որտեղ որոշվել է 1,5 մլրդ դոլար հատկացնել ԱԱԽ-ին: Այդ գումարը 2011-ի փետրվարին ԱՄՆ-ում սառեցված 30 մլրդ դոլարի մի մասն է:

Պ. Ք.

Աղանդավորները Եր. Օշյանի գրչի տակ

Հատված «Հայ Տիասպորա» գրքից

Եթե աղանդավորական երեւույթները հետխորհրդային Հայաստանում նոր են, ապա սփյուռքում դրանք եղել են սկզբից եւեթ, անգամ Մեծ եղեռնից առաջ՝ Կիլիկիայի ու Արեւմտյան Հայաստանի տարբեր բնակավայրերում: Դրանց անդրադարձել են մեր գրողներից շատերը, տարբեր հոդվածներում եւ հրապարակումներում ձաղկելով օտարամուտ այդ «վարդապետությունները» ու դրանց քարոզիչներին, որոնց զոհերից մեկն էլ հայ գրականության ամենահինգնաստիպ ներկայացուցիչ Ինտրան էր՝ իր տխուր վախճանով: Գրողներից մի քանիսն էլ քարոզիչներին ու ժողովրդի մեջ նրանց թողած ավերներին անդրադարձել են գեղարվեստական երկերում՝ առավելաբար կոմիկական իրավիճակներում, ինչպես «սուրբ հոգով փրկվածները» Վահան Թոթովենցի «Կյանքը հին հռոմեական ճանապարհի վրա» անմահ հուշագրության մեջ: Թեմային անդրադարձել է նաեւ մեր մեծ երգիծաբան Երվանդ Օշյանը 1924-1925 թթ.-ին Կահիրեի ռամկավարական «Արեւ» օրաթերթում որպես թերթոն հրատարակած իր «Հայ տիասպորան» վեպում (առանձին գրքով հրատարակվել է 1999-ին՝ Երեւանի Գրականության եւ արվեստի թանգարանի կողմից, խմբագրությամբ Հենրիկ Բախչինյանի):

Ստորեւ՝ մի հատված շուրջ 85 տարվա վաղեմությամբ այդ ստեղծագործությունից: Դեպքը տեղի է ունենում Բեյրութում, որն այդ ժամանակ մաս էր կազմում Մեծ Սիրիային: Օգտվելով նավահանգստային այդ քաղաք ապաստանած Եղեռնից մազապուրծ հայերի աղքատ եւ անպատշաղ վիճակից, Օշյանի հերոսներից Եղբայր Բառնաբասը «աշխարհի վերջի» սպառնալիքով փորձում է նրանց «դարձի» բերել, «Տէրոջ խօսքն» է քարոզում եւ... դրամ վաստակում, նախանձը շարժելով այս վեպում Օշյանի մյուս հերոսների՝ Սեւ Կարոյի, Թոմիի եւ Թաթուլի, որոնք կեղծ տեռորիստներ են, կեղծ ֆիդայիներ, պարզապես շուլլերներ:

- Ասիկա իմ ընկերս է, Ռումանիայէն միասին եկած ենք... Սեւ Կարո է անունը, թերեւս լսած ես:

- Կարծեմ թէ այդ անունը լսած եմ,- ըսաւ Թոմի բարեւելով:

- Իսկ միւս պարոնը հոս ճանչցանք,- շարունակեց Թաթուլ,- ի՞նչպէս է ձեր անունը:

- Եղբայր Բառնաբաս,- պատասխանեց անծանօթ երիտասարդը:

- Այո, հիմա յիշեցի,- գոչեց Թաթուլ ժպտելով,- եղբայր Բառնաբաս:

Այն, որ ինքզինք եղբայր Բառնաբաս կ՚անուանէր, հազիւ 30-32 տարեկան, համակրելի դէմքով, խելացի աչքերով, խարտեաշ երիտասարդ մըն էր:

- Եղբայր Բառնաբասը,- շարունակեց Թաթուլ,- քարոզիչ է, Քրիստոսի մօտալուտ գալուստը կը պատմէ կոր եւ միեւնոյն ատեն աշխարհ ալ մօտ օրէն պիտի կործանի՝ կ՚ըսէ կոր...

- Ո՞ւր է ձեր բուն տեղը,- հարցուց Թոմի՝ երիտասարդին դառնալով:

- Մեր բուն տեղը յայտնի չէ,- պատասխանեց երիտասարդը,- մեր գործերուն համեմաս կա՛մ երկինքի արքայութիւնը պիտի վայելենք եւ կա՛մ դժոխքի կրակին մէջ պիտի այրինք:

- Իմ հարցուցածս այդ չէ, հոս, Սուրիոյ մէջ ո՞ւր կը բնակիս, եղբայր Բառնաբաս:

- Որոշ տեղ մը չունիմ, կը պտտիմ, կը քարոզեմ, որովհետեւ ժամանակ պէտք չէ կորսնցնել, նշանները մէջտեղ են, Քրիստոսի գալուստը մօտ է... պէտք է ամէնքս ալ պատրաստ ըլլանք, մեղքի մարդը մեր վրայէն թօթափենք:

- Եղբայր Բառնաբաս, ո՞ւրկէ եկար Պէյրութ,- հարցուց Թոմի:

- Հալէպէն կ՚ուգամ եւ Զահլէ կ՚երթամ եղբայրներուն եւ քոյրերուն քարոզելու:

- Գիրքեր, տետրակներ ալ ունի պայուսակին մէջ, մեզի տուաւ,- միջամտեց Թաթուլ:

Յետոյ երիտասարդին դառնալով՝ աւելցուց:

- Այս մեր բարեկամին ալ տուր, ան ալ իր մեղքերը քաւելու պէտք ունի:

- Չէ՛, չէ՛,- գոչեց Թոմի,- թող մնայ, ես գիրքի ու տետրակի տալիք դրամ չունիմ:

- Մենք Տէրոջ խօսքը դրամով չենք տար,- ըսաւ երիտասարդը,- ձրի կը բաժնենք:

- Այդ տարբեր:

Եվ ծրար մը գիրք, տետր, ամսաթերթ թխմեց Թոմիի ձեռքը:

Թոմի շնորհակալութեամբ առաւ ծրարը:

- Երբ դուք կարդաք, լմցուցէք, ձեր բարեկամներուն տուէք, որ անոնք ալ կարդան ու փրկուին,- ըսաւ եղբայր Բառնաբաս:

- Այնպէս կ՚ընեմ,- խոստացաւ Թոմի:

Բառնաբաս, որ արդէն մեկնելու պատրաստութիւնը տեսած էր, ծառան կանչեց, հաշիւը տեսաւ ու «մնաք բարով» ըսելով՝ մեկնեցաւ ընկերակցութեամբ ծառային, որուն հետ սիրալիր խօսակցութեան մը բռնուեցաւ:

Վայրկեան մը ետքը ծառան վերադարձաւ սուրճ բերելու համար Թոմիի:

- Կ՚երեւայ, որ այդ եղբայր Բառնաբասը առաջուց կը ճանչնաս,- ըսաւ Թաթուլ ծառային:

- Անշուշտ, հին ընկերներ ենք,- պատասխանեց ծառան,- միասին կամաւոր լեգէոնական եղած ենք:

- Վա՛յ,- գոչեց Թոմի,- ես ալ լեգէոնական եմ:

- Խաթդ չի մնայ, բայց փախուկին մէկը կ՚երեւայ կոր,- ըսաւ Թաթուլ:

- Կատարեալ շոշորդ մը,- աւելցուց Թոմի:

- Փախո՞ւկ մի, շոշո՞րդ մի... ի՛նչ կ՚ըսէք, շունչանորդի հանած-վարածին մէկն է:

- Հապա այդ վերջնաշխարհի, Քրիստոսի գալուստին քարոզութիւնն՞ը...

- Ատոնք բոլոր խաղ են... ինք ամենէն աւելի կը խնդայ իր ըսածներուն վրայ:

- Այն ատեն ինչո՞ւ այդ քարոզութիւնը կ՚ընէ:

- Ի՞նչ ընէ խեղճը, շատ աշխատեցաւ, ասդին-անդին ինկաւ գործ մը գտնելու համար, կարելի չեղաւ, վերջապէս գնաց այդ ամերիկացիներուն դիմեց, ինքզինք ջերմ հաւատացեալ ցոյց տուաւ եւ յաջողեցաւ այդ քարոզիչի պաշտօնը ձեռք ձգել, հիմա հանգիստ կ՚ապրի:

- Ուրեմն ամսականով վերջնաշխարհ կը քարոզէ, ըսաւ Թոմի:

- Հարկաւ, պատասխանեց ծառան, ամիսը 40 դոլար կ՚առնէ, ճամբու ծախքերն ալ զատ... այդ ծախքերու հաշիւէն ալ ամիսը 20 սուրիական մը կը շինէ:

- Ծօ, ի՜նչ աղէկ գործ,- գոչեց Սեւ Կարո,- ես այդչափ ամսականի փոխարէն միանակ Քրիստոսը չէ՝ Աստուածածինը ու Առաքեալնե՛րն ալ կը բերեմ աշխարհ:

- Եթէ յաջողի իր քարոզներով մէկը համոզել ու իրենց դարձնել, ատոր համար ալ զատ նուէր կը տանայ,- բացատրեց ծառան:

- Համոզուող կ՚ըլլա՞յ:

- Շատ, մանաւանդ երբ իր տանալիք նուէրին կէսն ալ անոր խոստանայ:

- Ի՜նչ գործեր կան աշխարհի մէջ, որմէ տեղեկութիւն չունինք,- ըսաւ Թոմի:

- Մենք ալ զինքը պակասամիտ փախուկի մը տեղը դրինք:

- Մինչ խելացին ինք է, եւ ապուշը մենք ենք եղեր, իրեն պէս ուրիշ քարոզիչներ ալ կա՞ն:

- Շա՜տ,- պատասխանեց ծառան,- ութը-տասը հատ ես միայն կը ճանչնամ... բայց ամենէն վարպետորդին այս եղբայր Բառնաբասն է:

Ծառան դուրս ելաւ սենեակէն:

ԵՐՎԱՆԴ ՕՇՅԱՆ

Դավիթ Կարեյանի անհատականությունը՝ աշխատանքներում

Մոտ յոթ ամիս առաջ ավտովթարի զոհ դարձավ երիտասարդ արվեստագետ, ուրույն մտածելակերպով ստեղծագործող մի մարդ, որը դեռ շատ իղձեր ու երազանքներ ուներ իրականացնելու: Եվ ահա ՆՓԱԿ-ը այդ երիտասարդ ստեղծագործողի Դավիթ Կարեյանի կենդանի հիշատակին է նվիրում իր 5 սրահներում, սեպտեմբերի 2-ին ժամը 17.00-ին բացվող չորս ստեղծագործական շրջանի շուրջ 40 աշխատանքների ու տեսասրահի հետահայաց ցուցադրությունները, որի խորագիրն է «Կենաց տոն»: Դավիթ Կարեյանը ծնվել է 1973 թ.: Սովորել է Փ. Թերլեմեզյանի անվ. ուսումնարանում, այնուհետեւ Երեւանի գեղարվեստի ակադեմիայում: Նա առաջինն էր, որ իր ընկերների հետ հիմնադրեց «Ակտ» խումբը: Դավիթի ստեղծագործությունների առաջին շրջանը (1993-2000 թթ.) արտահայտում էր մշակութային ամորտիզացիայի փորձարկման եւ արվեստի սահմանների ընդլայնման գործընթացը՝ արվեստը դիտարկում որպես քաղաքական ակտիվիզմ: Իսկ 2003-ից սկսած Դավիթը արվեստում նախընտրում է առավել անհատականացված մոտեցումը: Կառչած լինելով հայրենի հողին, բնաբխարհին, Դավիթ Կարեյանի ստեղծագործություններում տեղ էին գտնում ամեն մի մանրուք, որը բնության, մարդկության հետ կապ ունի: Կարեյանի գույների զուգադրումը, գծերի ուղղությունները հստակ մի պատմություն ու դրվագ էին իր կյանքից, իր ապրած տարիներից ու շրջապատից: Կարեյանը համոզված էր, որ արվեստը ազդեցություն ունի մեր կյանքի վրա, հետեւաբար նաեւ աշխարհի ինչպիսին լինելու վրա: «Եթե կյանքում ամեն ինչ ընթանար այնքան հարմոնիկ, որքան «նախածննդյան խավարում», ասում էր Դավիթ Կարեյանը, իսկ մենք լինեինք բնության նման ամբողջական, ապա կարիք չէր լինի գրել այն թեմաների մասին, բայց ցավոք ես գրում եմ, քանզի կյանքը դարձել է մեխանիկական եւ անտանելի: Դու կորցրել ես քո իդեալները...»:

Երեկ նորարարական փորձարարական արվեստի կենտրոնում ցուցահանդեսի կազմակերպիչներն ու համադրողները՝ ՆՓԱԿ-ի հիմնադիր Սոնիա Պալասանյանը, Դիանա Հակոբյանը, Լիլիթ Սարգսյանը եւ Արմեն Գրիգորյանը մանրամասն ներկայացրեցին Դավիթ Կարեյանի թողած արժեքավոր կտավների, նորարարական մտքի թռիչքով ստեղծված ծրագրերի ու նաեւ չորս տարբեր շրջանների բաժանված մտահղացումները: Կարեյանի վերջին նախագիծը, որն արված է ժամանակակից տեխնոլոգիաներով, ինտերնետի, թվային պատկերների միջոցով ու կրում է «Նոր տեղականություն» խորագիրը, բաղկացած է իրարից անկախ եւ միմյանց լրացնող մի շարք կտավներից: Վեցանկյուն մակերեսին տեղակայված պատկերները համակարգչային ծրագրով ստեղծված թվային անիմացիաներ են, որոնք վերարտադրվել են կտավին յուղաներկով ու ամեն մեկը առանձնանում է իր անվանումով՝ «Երկար կաղույտը», «Հեշտագին գիշեր», «Ժամանակ՝ որ չունի անուն», «Գույների չբացահայտված կիր» եւ այլն:

Ցավոք մենք այլեւս վկան չենք լինի Դավիթ Կարեյանի նորարարական ոճի այն յուրօրինակ կտավների ստեղծմանը, որոնց մասին միայն երիտասարդ արվեստագետի մտահղացումների պատառիկներն են մնացել:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

«Յուսուֆ Քարշ: Մարդկային հատկանիշների ոգեկոչումը»

«Արմինյն միրոր սփեթթեյթր» շաբաթաթերթի փոխանցմամբ կանադահայ տաղանդավոր լուսանկարիչ Յուսուֆ (Հովսեփ) Քարշի արվեստով եւ նրա մարդկային հատկանիշների բացահայտման եզակի ունակությամբ հիանալու բացառիկ առիթ է ընձեռել Ամերիկայի Հայկական գրադարան-թանգարանի (ԱԼՄԱ) հոգաբարձուների վարչությունը, կազմակերպելով նախ գալա-հանդիսություն, որը տեղի կունենա սեպտեմբերի 16-ին «Ֆերմոնտ կոմլի պլազա Բոստոն» հյուրանոցի դահլիճում՝ կոկտեյլ-ճաշկերույթով պատվելու համար Քարշի այրուն՝ Էստրելիտա Քարշին, ամուսնու լուսանկարներից մի ամբողջ հավաքածու թանգարանին նվիրելու առիթով եւ հաջորդ օրը՝ սեպտեմբերի 17-ին «Քարշ: Մարդկային հատկանիշների ոգեկոչումը» խորագրով ցուցահանդեսի բացումը՝ գրադարան-թանգարանի վերջերս ամբողջովին վերաձեւափոխված Պետուկյան պատկերասրահում:

Քարշը աշխարհով մեկ ճանաչված լուսանկարիչ է, որի լուսանկարչական աղարտի «ծառայություններից» օգտվել են բազմաթիվ նախագահներ, վարչապետներ, հոլիվուդյան աստղեր, գրողներ եւ երեւելի այլ անձնավորություններ: Նրանց թվում են եղել Ուինստոն Չերչիլը, Նիկիտա Խրուշչովը, Էլիզաբեթ Թեյլորը, Գրեյս Քելլին, Էռնեստ Հեմինգուեյը եւ Նորման Մեյլերը:

Հ. Ծ.

Ցուցահանդեսը նվիրված էր Անկախության հոբելյանին

ԼՂՀ հռչակման 20-րդ տարեդարձի կապակցությամբ Արցախի նկարիչների միությունը եւ ՀՀ նկարիչների միության Սյունիքի մասնաճյուղը կազմակերպել են ցուցահանդես, որի բացումը տեղի ունեցավ օգոստոսի 26-ին՝ Ստեփանակերտի մշակույթի եւ երիտասարդության պալատի ճեմասրահում:

Ցուցահանդեսին ներկայացված 50 նկարների ու երեք քանդակների հեղինակները արցախցի ու սյունեցի նկարիչներն ու քանդակագործներն են:

Արցախի նկարիչների միության նախագահ Լենորդ Զաքարյանը բացելով ցուցահանդեսը, նշեց, որ այն նվիրված լինելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակման 20-ամյակին, ամբողջովին թաթախված է հայրենի եզերքի հանդեպ սիրով եւ ներկայացնում է Արցախի ու Սյունիքի գեղանկարիչների լավագույն գործերի ընտրանին:

Ցուցահանդեսի բացմանը ներկա էին ԼՂՀ Ազգային Ժողովի նախագահ Աշոտ Ղուլյանը, ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարար Նարինե Աղաբալյանը, ստեղծագործական կառույցների ներկայացուցիչներ:

Ողջունելով միջոցառումը, հատկապես նկատի առնելով սյունեցի նկարիչների մասնակցությունը ցուցահանդեսին, ԼՂՀ խորհրդարանի խոսնակ Աշոտ Ղուլյանը մասնավորապես կարեւորեց արցախյան քանամյա գոյատեւության վերարտադրությունը գեղարվեստական գործերում: Նկարներում առկա են այդ պայքարի բոլոր էջերը, ինչը վկայում է, որ Արցախի Հանրապետության հռչակումը համահայկական տոն է, նշեց Աշոտ Ղուլյանը: Նա հույս հայտնեց, որ այդ տոնականությունը կուղեկցվի ամբողջ տարվա ընթացքում, քանզի այն ամփոփում է հայ ժողովրդի ազատության դարավոր ձգտումը:

Ցուցահանդեսի կազմակերպիչների հավաստմամբ, արցախցի եւ սյունեցի գեղանկարիչների աշխատանքների ցուցահանդեսը բաց կլինի մինչեւ սեպտեմբերի 12-ը, որից հետո կցուցադրվի նաեւ Գորիսում:

ԿԻՄ ԶԱՔԱՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

Ռիչարդ Թաշճյանի կտավները Սանտա-Ֆեյում

Նյու Մեխիկոյի (ԱՄՆ-ի նահանգ) մայրաքաղաք Սանտա Ֆեյում մադրիդցի Զոնսոններին պատկանող Գեղարվեստի «Մադրիդ» պատկերասրահում օգոստոսի 6-ին բացված կտավների խմբակային ցուցահանդեսում ներկայացվել է նաեւ հայազգի նկարիչ Ռիչարդ Թաշճյանի ջրաներկ կտավները, տեղեկացնում է «Արմինյն միրոր սփեթթեյթր» շաբաթաթերթը:

«Թաշճյանի ներկայացակը մաքուր է ու փխրուն, ինչպես Նյու Մեխիկոյի օդը», գրում է թերթը: Հիմնականում նա կտավին է հանձնում ԱՄՆ-ի այդ նահանգի յուրօրինակ տեսարանները, «Դիսբլո կանյոնը» (Սատանայի կիրճը), «Զեմեզ» լեռները, «Նամբեն» եւ այլն: Հատկանշական են մասնավորապես 1980-ականներին Հայաստանում նկարած երկու կտավները, որոնք հարազատ են դարձել իրեն, որովհետեւ նմանություններ է հայտնաբերել դրանց եւ իր ապրած նահանգի տեսարանների միջեւ: Դրանցից մեկը Արագածն է, որը նրան հիշեցրել է «Զեմեզը», իսկ մյուսը՝ Հրազդան գետն ու նրա շրջակայքը, որը նման է Ռիո Գրանդեյի երկայնքին ձգվող «Էմբուդո վելարե» տարածքին:

Ցուցահանդեսը գործելու է մինչեւ սեպտեմբերի 6-ը:

Հ. Ծ.

Հանրակրթական դպրոցի աշակերտները կյուրացնեն շախմատի գաղտնիքները

Կառավարության որոշմամբ նոր ուսումնական տարվանից Հայաստանի բոլոր հանրակրթական դպրոցներում դասավանդվելու է շախմատ առարկան: Այս առիթով երեկ շախմատի ակադեմիայում ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանն ու միջազգային գրոսմայստեր, շախմատի ակադեմիայի տնօրեն, շախմատի Հայաստանի ֆեդերացիայի փոխնախագահ Սմբատ Լպուտյանը հանդիպեցին լրագրողներին:

ՖՈՏՈԼՈՒՐ

Արմեն Աշոտյանը նշեց, որ դպրոցներում շախմատ դասավանդելու մտադրություն վաղուց կար: Վերջին տարիներին այս հարցի շուրջը բուռն քննարկումներ էին տեղի ունեցել, համապատասխան աշխատանքներ են կատարվել մանկավարժների, մասնագետների, հոգեբանների մասնակցությամբ: Կատարված հսկայածավալ աշխատանքի արդյունքում հնարավոր եղավ այս տարվանից շախմատի առարկան դասավանդել հանրապետության հանրակրթական բոլոր դպրոցներում: Այն դասավանդվելու է 2-րդ դասարանում եւ նախատեսված է 3 տարվա համար:

Ըստ նախարարի, արդեն հրատարակվել եւ դպրոցներին են բաժանվել «Շախմատ» դասագիրքը, «Շախմատի դասավանդման հոգեբանական ձեռնարկը», «Ուսուցչի ձեռնարկը» եւ «Գործնական վարժությունների ժողովածուն»: Մինչեւ ուսումնական տարվա սկիզբը բոլոր դպրոցները կպաշտպանվեն դասավանդման համար անհրաժեշտ պարագաներով՝ շախմատի խաղասեղաններ, աթոռներ, ժամացույցներ, խաղաստախակներ, ցուցադրական խաղաստախակներ: Դպրոցների ղեկավարությանը խորհուրդ է տրվել առանձին սենյակ հատկացնել շախմատի դասավանդման համար:

Արմեն Աշոտյանը նաեւ նշեց, որ Հայաստանը կդառնա աշխարհում առաջին երկիրը, որտեղ հանրակրթական բոլոր դպրոցներում կդասավանդվի շախմատ առարկան: Շախմատին կտրամադրվի շաբաթական 2 ժամ, որից մեկ ժամը վերցվելու է ֆիզկուլտուրա առարկայից: Այս ծրագիրն իրականացվելու է նաեւ Արցախի խոշոր դպրոցներից մեկում, որում գործում է 5 հաս 2-րդ դասարան:

Նախարարի համոզմամբ, շախմատի դասավանդումը դպրոցներում հնարավորություն կընձեռի զարգացնելու աշակերտների տրամաբանությունը, մտավոր կարողությունները, կձեւավորի արդարամտություն եւ կկատարելագործի անհատի բնավորության լավագույն գծերը՝ կամքի ուժը, վճռականությունը, սառնաարտությունը, համբերությունը, կարգապահությունը, հաղթանակի ձգտելու կամքը, օբյեկտիվությունը: Մյուս կողմից ի հայտ կբերի պատանի նոր շախմատիստներ, որոնք հետագայում իրենց վարպետությունը կկատարելագործեն շախմատի ակադեմիայում:

Սմբատ Լպուտյանն անդրադարձավ առարկայի դասավանդման համար մասնագետների պատրաստման հարցին: Նա ուրախությամբ նշեց, որ այսօր հանրապետության բոլոր հանրակրթական դպրոցներն ապահովված են շախմատի համապատասխան մասնագետներով, որոնք հատուկ դասընթացներ են անցել, վերապատրաստվել են ու քննություն հանձնելով, իրավունք են ստացել դասավանդելու առարկան: Ընդհանուր առմամբ 1219 մասնագետ է պատրաստվել, որից 621-ը դպրոցների տարբեր առարկաների ուսուցիչներ են: Ըստ անվանի գրոսմայստերի, 5 տարեկանից երեխան արդեն լավ ընկալում է շախմատի խաղի կանոնները: Այնպես որ 2-րդ դասարանցու համար դժվար չի լինի շախմատի առարկան ընկալելը: Սմբատ Լպուտյանը հավատում է, որ այս հիանալի նախաձեռնությունը մեծ օգուտ կտա երեխաների մտավոր ունակությունների զարգացմանը եւ տարիներ անց կտա իր դրական պտուղները:

Արզումանյանը հավաքականին չի կարող օգնել

Հայաստանի ազգային հավաքականը օգոստոսի 29-ից ֆուտբոլի ակադեմիայում սկսել է նախապատրաստությունը սեպտեմբերի 2-ին եւ 6-ին Անդորրայի եւ Սլովակիայի ընտրանիների հետ կայանալիք արտագնա ընտրական մրցախաղերին; Հավաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանն ուսումնամարզական հավաքի է հրավիրել 21 ֆուտբոլիստի:

Հրավիրվածների ցանկում է հավաքականի նորեկ, Եկատերինբուրգի «Ուրալի» պաշտպան Դենիս Թումասյանը, որը վաղուց էր մարզիչների տեսադաշտում: Պաշտպանական գծի խաղացողներից հավաքին մասնակցում են փյունիկցիներ Սարգիս Հովսեփյանը, Արթուր Յուզբաշյանը եւ Արտակ Եդիգարյանը, Ռոբերտ Արզումանյանը («Յագելոնիա», Լեհաստան), Լեւոն Հայրապետյանը («Լեխիա», Լեհաստան), Վալերի Ալեքսանյանը («Սանտա Նաֆթ», Իրան) եւ Հրայր Մկոյանը («Միկա»): Թեեւ Արզումանյանը մասնակցում է մարզումներին, սակայն նա չի մեկնի հավաքականի հետ: Ռոբերտը վնասվածքի պատճառով բավականին ժամանակ հանդես չի եկել «Յագելոնիայում», չմասնակցեց նաեւ Լիտվայի հավաքականի հետ ընկերական հանդիպմանը: Նա առայժմ պատրաստ չէ:

ՖՈՏՈԼՈՒՐ

Որոշ ընդմիջումից հետո կրկին հավաքական է հրավիրվել «Միկայի» դարպասապահ Գեւորգ Կասպարովը: Բնականաբար, առաջիկա 2 հանդիպումներում դարպասի պաշտպանությունը կվստահվի Ռոման Բերեզովսկուն:

Կիսապաշտպանական գծի խաղացողներից հավաքականի կազմում ընդգրկվել է ՀՀ երիտասարդական հավաքականի նախկին խաղացող, բելգիական «Ռոզելարում» հանդես եկող Մասիս Ոսկանյանը: Հավաքին մասնակցում են նաեւ «Բանանցի» կիսապաշտպան Արթուր Եդիգարյանը, փյունիկցի Էդգար Մալաքյանը, Հենրիխ Մխիթարյանը («Շախտյոր»), Կառլեն Մկրտչյանը («Մետալուրգ») եւ Զավեն Բադոյանը («Իմպուլս»): Կրկին հավաքական է հրավիրվել Յարոսլավլի «Շիննիկի» հարձակվող Արթուր Սարկիսովը, որը մեր ընտրանում նորամուտը նշեց լիտվացիների հետ խաղում: Քանի որ հավաքականի առաջատարներից մեկը՝ Յուրա Մովսիսյանը որակազրկման պատճառով չի կարող մասնակցել Անդորրայի հավաքականի հետ հանդիպմանը, ուստի Սարկիսովը դիտարկվում է որպես նրա փոխարինող: Առաջիկա հանդիպումներին են նախապատրաստվում նաեւ Մարկոս Պիզելին, Գեւորգ Ղազարյանն ու Էդգար Մանուչարյանը: Ստացվել է այնպես, որ հավաքականի հարձակման գծում այսօր բոլորն էլ լեգեոնականներ են:

Լիլիթ Գալոյանը 2-րդ պարտությունը կրեց

Սանկտ Պետերբուրգում շարունակվում է շախմատի աշխարհի նախկին չեմպիոնուհի Լյուդմիլա Ռուդենկոյի հուշամրցաշարը: 7-րդ տուրն անհաջող էր Լիլիթ Գալոյանի համար, որը սպիտակներով պարտվեց Օլգա Սյյաժկինային: Դա մրցաշարում հայ շախմատիստուհու 2-րդ պարտությունն էր: Առաջինը նա կրել էր մեկնարկային տուրում: 7 տուրից հետո Գալոյանը 4 միավորով 14-րդ տեղում է:

Ուկրաինան ներկայացնող Եվգենիա Դոլուխանովան սպիտակներով հաղթեց ռուսաստանցի Իրինա Զակուրդյաեւային եւ վաստակելով 5 միավոր, մոտեցավ առաջատարներին: Իսկ ռուսաստանցի Ալինա Բալայանը պարտվեց Աննա Կոստրիկինային: Նա 3 միավորով 25-րդ տեղում է:

7-րդ տուրից հետո մրցաշարում երկիբախություն հաստատվեց: Աղյուսակը 6-ական միավորով գլխավորում են ռուսաստանցիներ Սանդուգաչ Շայդուլինան եւ Ալեքսանդրա Գորյաչկինան: Սանդուգաչը հաղթեց իր հայրենակցուհի Դարիա Տրաոեզնիկովային, իսկ Գորյաչկինան հաշտություն կնքեց Մարինա Ռոմանկոյի հետ:

Մրցաշարի ավարտին մնացել է 2 տուր: 8-րդ տուրում Լիլիթ Գալոյանը սեւերով կխաղա ռուսաստանցի Անաստասիա Տրավկինայի հետ: Եվգենիա Դոլուխանովայի մրցակիցը կլինի Մարինա Ռոմանկոն:

ՆԱՎԱՄՈԴԵԼԱՅԻՆ ՍՊՈՐՏ

Շահազիզյանները կրկին ուժեղագույնն են աշխարհում

Ութամյա ընդմիջումից հետո ԵՊՀՀ մեխանիկայի ամբիոնի դոցենտ Հրաչյա Շահազիզյանը կրկին նվաճեց նավամոդելային սպորտի աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Նա մասնակցեց Ֆրանսիայի Շատերլո քաղաքում կայացած նավամոդելային սպորտի աշխարհի առաջնությանը, որում ներկայացված էին ռեկորդային թվով՝ 104 նավամոդելներ:

Հրաչյա Շահազիզյանը մասնակցեց 10 խորանարդ սմ ծավալով շարժիչով, ջրային պտուտակով կորդային արագընթաց մոդելով: Հրաչյայի նավակի զարգացրած արագությունը չէր նվազում նույնիսկ շրջադարձերի ժամանակ: Արդյունքում վեստերան մարզիկը 8-րդ անգամ հռչակվեց աշխարհի չեմպիոն՝ յուրօրինակ ռեկորդ սահմանելով հայկական սպորտում: Գերազանց հանդես եկավ նաեւ Հրաչյայի որդին՝ Բաբկենը: Նա պայքարեց 4 դասում: Բ-1 դասում՝ օդային պտուտակով կորդային արագընթաց մոդելով նա նվաճեց աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Մյուս դասերում նա արժանացավ երկու արծաթե եւ մեկ բրոնզե մեդալի: Մրցանակային տեղերի էին հավակնում նաեւ Հրաչյա Շահազիզյանի մյուս զավակները՝ Արմանն ու Գայանեն, որոնք նոր մոդելներ էին պատրաստել: Ցավոք, Երեւանում համապատասխան պայմաններ չլինելու պատճառով նրանք չհաստատեցին մոդելները տեղում կարգավորել:

Նշենք, որ Հրաչյա Շահազիզյանը 2005-ին ընտրվել էր նավամոդելային սպորտի համաշխարհային կազմակերպության ԱԲ կորդային արագընթաց մոդելների բաժնի նախագահ: Շատերլոյում երեւանցին վերընտրվեց նույն պաշտոնում: Շահազիզյաններն իրենց հաղթանակները նվիրում են ՀՀ անկախության 20-ամյակին:

Դավիթ Գրաֆի 4-րդ հաղթանակը

Հայ բռնցքամարտիկ Դավիթ Գրաֆը պրոֆեսիոնալ ռինգում իր 4-րդ մենամարտն էլ հաղթանակով ավարտեց: Ընդ որում ինչպես նախորդ երեք մենամարտերում, այս անգամ էլ Դավիթը նոկաուտի ենթարկեց մրցակցին՝ հունգարացի Վիկտոր Շալային: Դրա համար Գրաֆին բավարարեց ընդամենը մեկ ռաունդը:

Այժմ Դավիթ Գրաֆը պատրաստվում է ժամանել Երեւան ու ներկա գտնվել Վախթանգ Դարչինյանի մենամարտին:

Նորեկներ երիտասարդական հավաքականում

Պատասխանատու երկու հանդիպումներ են սպասվում նաեւ ֆուտբոլի Հայաստանի երիտասարդական հավաքականին: Սեպտեմբերի 3-ին հավաքականը հյուրընկալվելու է Անդորրայի ընտրանուն, իսկ երեք օր հետո արտագնա խաղում ուժերն է չափելու ընտրական խմբի առաջատար չեխերի հետ: Երեկվանից Հայաստանի երիտասարդական հավաքականը գլխավոր մարզիչ Ռաֆայել Նազարյանի գլխավորությամբ ֆուտբոլի ակադեմիայում սկսել է երկօրյա հավաքը, որին մասնակցում են 21 ֆուտբոլիստներ:

Դարպասապահի հարցում Ռաֆայել Նազարյանը պետք է ընտրություն կատարի փյունիկցիներ Վարդան Իսրայելյանի եւ Արսեն Պետրոսյանի միջեւ: Նոր ֆուտբոլիստներ են հրավիրվել հավաքական հանձինս «Գանձասարի» պաշտպան Ալեն Համբարձումյանի, «Միկայի» կիսապաշտպան Վարդգես Սաթումյանի, նույն գծի խաղացողներ Խորեն Բայրամյանի («Ռոստով», Ռուսաստան) եւ Աշոտ Սարդարյանի (ՍԱՍ «Էուպեն», Ֆրանսիա): Լեգեոնականներից հավաքին մասնակցում է նաեւ Չեխիայի Օստրավա քաղաքի «Բանիկ» թիմի հարձակվող Գեւորգ Բաղալյանը:

Առաջիկա հանդիպումներին նախապատրաստվում են նաեւ «Բանանցի» պաշտպաններ Հովհաննես Համբարձումյանը, Գրիշա Խաչատրյանը, Գագիկ Դաղբաշյանը եւ Արգիշտի Պետրոսյանը, փյունիկցիներ Վարազդատ Հարությունն ու Տարոն Ոսկանյանը, «Միկայի» պաշտպան Անդրանիկ Ոսկանյանը: Կիսապաշտպաններից հավաքական են հրավիրվել փյունիկցիներ Գագիկ Պողոսյանը եւ Կամո Հովհաննիսյանը, «Բանանցի» խաղացողներ Դավիթ Սուջյանը, Վալտեր Պողոսյանը եւ Բենիկ Հովհաննիսյանը: Հարձակվողների թվում են փյունիկցի Հովհաննես Հովհաննիսյանը եւ արտաքսված Գեւորգ Կարապետյանը:

Ալեքսանդր Պովետկինը նվաճեց չեմպիոնի տիտղոսը

Գերմանիայի Էրֆուրտ քաղաքում գերծանրաբային կարգում WBA-ի վարկածով աշխարհի չեմպիոնի թափուր տիտղոսը վիճարկեցին ռուսաստանցի Ալեքսանդր Պովետկինն ու ուզբեկ Ռուսլան Չագաեւը:

Մրցակիցները շատ զգույշ սկսեցին մենամարտը: 3-րդ ռաունդից արդեն սկսեց նշմարվել Պովետկինի առավելությունը: 6-րդ ռաունդում Չագաեւը ձախ բռունցքով մի քանի հուժկու հարվածներ հասցրեց, որոնց պատճառով Պովետկինը զգալիորեն նվազեցրեց իր ակտիվությունը:

8-րդ ռաունդից ռուսաստանցի բռնցքամարտիկը կրկին տիրեց նախաձեռնությանը եւ մինչեւ մենամարտի ավարտն այլեւս չզիջեց մրցակցին: Պովետկինը բավականին ակտիվ էր գործում, հարվածներ հասցնում մրցակցին՝ սպիտելով վերջինիս անցնել պաշտպանության: Բոլոր մրցավարներն էլ հաղթանակը շնորհեցին Պովետկինին (116-112, 117-113, 117-113): Այսպիսով, Պովետկինը նվաճեց գերծանրաբային կարգում WBA-ի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսը:

Բռնցքամարտի համաշխարհային ընկերակցությունը (WBA) պարտադրել է գերծանրաբային կարգում աշխարհի բացարձակ չեմպիոն Վլադիմիր Կլիչկոյին մինչեւ 2013-ի գարունը իր տիտղոսի պարտադիր պաշտպանությունն իրականացնել Ալեքսանդր Պովետկինի հետ մրցավեճում: Ըստ Կլիչկոյի պրոմոութեր Կալե Զաուեռլանդի՝ Կլիչկո-Պովետկին մենամարտը 2012-ի գարնանից շուտ դժվար թե կայանա: Հնարավոր մրցավայրերից մեկը Մոսկվան է:

Ըստ bild.de կայքէջի, 31-ամյա Ալեքսանդր Պովետկինը հնարավոր է, որ իր տիտղոսը պաշտպանի աշխարհի նախկին բացարձակ չեմպիոն, 48-ամյա ամերիկացի Էվանդեր Հոլիֆիլդի հետ մենամարտում: Այն թերեւս կայանա Ցյուրիխում դեկտեմբերի 17-ին: Կալե Զաուեռլանդը տեղեկացրել է, որ այդ հարցով արդեն խոսել է Հոլիֆիլդի հետ: Այդ տեղեկատվությունը հաստատել է նաեւ Պովետկինի մենեջեր Վլադիմիր Խրյունովը:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Օրվա հետքերով

Համայնքային կալվածքների մասին Էրդողանի կառավարության հրամանագիրը նաեւ հարցականներ է առաջացնում

Դա պայմանավորված է հրամանագրի սահմանափակվածությամբ

Նախորդ համարում «**Ազգը**», անդրադառնալով Թուրքիայի վարչապետ Էրդողանի օգոստոսի 27-ին ուժի մեջ մտած համայնքային կալվածքների մասին հրամանագրին, նշել էր, որ դա ենթադրում է պետականորեն առգրավված անշարժ գույքի վերադարձը ազգային փոքրամասնություններին:

Թուրքիայում համայնքային կալվածքների առգրավման սկիզբը դրվել է դեռեւս 1935-ին, երբ հիմնադրամների (վագըֆ) գլխավոր վարչությունը համայնքներից պահանջեց ներկայացնել իրենց տնօրինության տակ գտնվող անշարժ գույքի մասին հայտարարագիր: Պահանջը կատարվեց 1936-ին, եւ մինչեւ 60-ական թվականները համայնքային հիմնադրամները իրավաբանական անձի կարգավիճակով կարողացան ընդլայնել իրենց ունեցվածքը:

Սակայն 60-ականներին կալվածքների նկատմամբ հիմնադրամների գլխավոր վարչության դիրքորոշումը հետզհետե փոխվեց, որն սկսեց ազգային փոքրամասնություններին պատկանող հիմնադրամներից պահանջել իրենց ունեցած անշարժ գույքի սեփականության վկայագրեր: Մինչդեռ ոչ մահմեդական հիմնադրամներն այդ գույքը ձեռք էին բերել դեռեւս օսմանյան շրջանում սուլթանի հրովարտակի հիման վրա, ուստի նրանց որեւէ վկայական չէր տրվել:

Այսպիսով, 1936-ի հայտարարագրերում չգրանցված անշարժ գույքը իշխանություններն առգրավեցին համայնքներից: Ազգային փոքրամասնությունների հարուցած դատական բոլոր գործերը հիմնադրամների գլխավոր վարչության դեմ դատապարտվեցին պարտության: Ավելին, նրանց դիմումները Վճռաբեկ դատարան հանգեցրին այս դատարանի 1974-ին ընդունած որոշմանը. «Ոչ թուրքերին պատկանող կազմակերպություններին, անկախ իրավաբանական անձի կարգավիճակից, արգելվում է անշարժ գույք ձեռք բերելը»:

Այսպիսով, համաձայն բնույթ ստացավ համայնքային կալվածքների առգրավումն ու դրանց փոխանցումը պետական գանձարան կամ հիմնադրամների գլխավոր վարչություն: Էրդողանի կառավարության հրամանագիրը ներառում է համայնքային այն կալվածքները, որոնց ցանկը դեռեւս 1936-ին ունեցվածքի հայտարարագրերով ներկայացվել էր հիմնադրամների գլխավոր վարչություն, ինչպես նաեւ կսակելու իրավունքից զուրկ լինելու պատճառով ազգային փոքրամասնության ներկայացուցիչների գանձարան փոխանցված գույքերը, որոնց մեջ են պետական գանձարանի, հիմնադրամների, խաղաքաղաքացիների, նահանգապետարանների տնօրինությանն անցած կալվածքները, այդ թվում՝ գերեզմանատները:

Ըստ հրամանագրի ենթադրվում է, որ համայնքները 12 ամսում դիմում ներկայացնեն հիմնադրամների գլխավոր վարչություն, որի դրական որոշումը հասատի Թուրքիայի ազգային մեծ ժողովը: Այլ կերպ, հրամանագիրը դեռեւս հարցի լիարժեք լուծումը չէ, հատկապես հույն համայնքի պարագայում, որովհետեւ 1967-ին Ստամբուլից հույների մեծամասնության վտարումից հետո նրանց թիվը ավելի քան 80 հազարից կրճատվել է շուրջ 2500-ի: Թերեւս դա է պատճառը, որ «Ապոեւմատինի» թերթի գլխավոր խմբագիր Միխայիլ Վասիլակիսը թուրքական մամուլին հայտարարել է. «Կալվածքները համայնքներին վերադարձնելը անշուշտ տպավորիչ քայլ է, սակայն մի բուռ հույն փոքրամասնության համար բոլորովին անօգուտ: Յուրացնելով գույքը՝ դրանից կօգտվի մի քանի աչքաբաց, այլ ոչ թե համայնքը, որովհետեւ չենք կարողանում կազմել սեփական կալվածքը տնօրինող որեւէ վարչություն»:

Նրան լրացրել է Գեդիկփաշայի հայկական եկեղեցու ունեցվածքի հանձնաժողովի նախագահ Հարութ Շանլին. «Վերադարձման ենթակա կալվածքներն արդեն մեր համայնքին էին պատկանում: Ոչ մահմեդականներից առգրավված կալվածքների թիվն ավելի քան 280 է, որից 12-ն արդեն վերադարձել են: Ներկա պահին ունենք շատ ավելի լուրջ խնդիրներ, քան կալվածքները, ինչպիսիք են, օրինակ, վարժարաններին, պատրիարքարանին իրավաբանական անձի կարգավիճակ տրամադրելը»:

Համենայն դեպս, ենթադրվում է, որ հրամանագրով թուրքական իշխանությունները Ստամբուլում հայ համայնքին վերադարձնեն Գյուլբենկյանների արհեստանոցների համալիրը, Գեդիկփաշայի հայ բողոքական վարժարանը, հայ բողոքական ժողովարանին պատկանող բնակելի տուն, ճաշարան, խաղահրապարակ եւ բարձրահարկ շենք, Սուրբ Փրկիչ հիվանդանոցից առգրավված 6 տուն, մեկ խանութ, բազմաթիվ շինություններ, ինչպես Սուրբ Հարություն հիմնադրամին պատկանող անշարժ գույքի բազմաթիվ տեսակներ:

ՀԱԿՈԲ ՉԱՔԲԱՆ

Նոր ռազմական արկածախնդրության դեպքում Հայաստանը չի վարանելու...

1-ին էջից

Նշելով դեռեւս շատ խնդիրների լուծված չլինելը եւ համոզվածություն հայտնելով «հաղթանակներով սկսած գործը հաջողությամբ ավարտելու» առումով՝ Հայաստանի նախագահը հարցադրում է արել նույն ղարաբաղյան համաձեւքում, թե ո՞րն է հաջորդ քայլը, եւ ի՞նչ ակնկալիքներ կան: «Անկախ Ադրբեջանի ապակառուցողական վարքագծից, Հայաստանը, ինչպես եւ նախկինում, շարունակելու է իր ջանքերը ղարաբաղյան հիմնախնդրի բացառապես խաղաղ, միջազգային իրավունքի, ՄԱԿ-ի կանոնադրության մեջ արտացոլված սկզբունքների հիման վրա կարգավորելու ուղղությամբ»:

Այդուհանդերձ, Սերժ Սարգսյանը շեշտադրել է. «Թող ոչ ոք չկասկածի մեր դիրքորոշման հաստատակամությանը եւ հստակությանը. մենք ունենք կարմիր գիծ, որ չենք կարող երբեք հատել: Դրա մասին խոսել ենք թե՛ հրապարակավ, թե՛ մեր գործընկերների հետ հանդիպումներում, այն արտացոլված է իմ նախընտրական ծրագրում եւ բազմաթիվ անգամներ արված հայտարարություններում»:

Եվ սա այն դեպքում, երբ, ըստ նախագահի, Բաքուն պատրաստ չէ խաղաղության, «քանի որ հնարավոր չէ խաղաղություն հաստատել պատերազմ քարոզելով, հաշտեցնել հասարակություններին հայատյացություն սերմանելով, վստահություն կառուցել սպառազինության մրցավազք հրահրելով»: «Համոզված եղեք՝ նոր ռազմական արկածախնդրության պարագայում Հայաստանը չի վարանելու կրկին հակառակորդին խաղաղություն պարտադրել», վստահեցրել է Սերժ Սարգսյանը՝ Ադրբեջանի վարքագիծն անընդունելի համարելով:

Ամփոփելով դիվանագետների հետ նախորդ նմանատիպ հանդիպումից հետո տեղի ունեցած իրադարձությունները՝ Սարգսյանը հիշեցրել է, որ Հարավային Սուդանի ձեռք բերած անկախությունը հարուցանում է ինքնորոշման իրավունքի իրագործման համաշխարհային փորձը եւս մեկ անգամ: «Արցախի պարագայում այդօրինակ ելքը նույնպես անխուսափելի է, չնայած այսօր դեռեւս չեմ կարող խոսել ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացում Ադրբեջանի դիրքորոշման մեղմացման մասին», ասել է Հայաստանի նախագահը:

Սերժ Սարգսյանն անդրադարձել է նաեւ Հայաստան-Թուրքիա հարաբերություններին: «Շատերին կարող է թվալ, թե մենք պետք է ափսոսանք Հայաստան-Թուրքիա հարաբերությունները կարգավորելու նախաձեռնություն դրսեւորելու համար, քանի որ Թուրքիան հրաժարվեց իր պարտավորություններից, իսկ մենք իսկայական քաղաքական կապիտալ ծախսեցինք»: Սակայն նախագահի գնահատականով՝ այդ նախաձեռնությունը բարձրացրեց Հայաստանի միջազգային հեղինակությունը եւ ցրեց նոր ու ժամանակակից Թուրքիայի մասին մեր գործընկերների պատրանքները՝ բացահայտելով հայերիս համար պատմական փորձով ճանաչելի քաղաքականության արդի դրսեւորումները:

«Այդուհանդերձ, մենք հավատարիմ ենք Հայաստան-Թուրքիա հարաբերություններն առանց նախապայմանների կարգավորելու մեր ուղուն եւ դիրքորոշմանը: Թուրքիան պետք է իր մեջ ուժ գտնի՝ հարգելու իր իսկ սանձնած պարտավորությունները՝ տարբ չտալով իրեն ժամանակակից տարածաշրջանային պետություն համարողին պատիվ չբերող պահանջներին», յուրօրինակ ուղերձ է հղել թուրքական կողմին Սերժ Սարգսյանը:

«Թուրքական կողմը պետք է հասկանա նաեւ, որ այս արձանագրությունները բաց, անժամկետ հնարավորություն չեն», ասել է նախագահը, ներկայացնելով, որ շատերը Հայաստանին խորհուրդ են տվել սպասել մինչեւ Թուրքիայի խորհրդարանական ընտրությունները: «Այնպես որ առաջիկա մի քանի ամիսների ընթացքում մենք կտեսնենք՝ արդյո՞ք խորհրդարանական ընտրություններից հետո Թուրքիայում առկա է մոտեցումների փոփոխություն, թեեւ անկեղծորեն ասած՝ անցած երկու ամիսները լավատեսության հիմքեր չեն տվել: Ըստ այդ դիտարկումների՝ մենք կորոշենք նաեւ արձանագրությունների ուղղությամբ մեր հետագա քայլերը»:

ՀԱՄԱՆԵՐՈՒՄ

Արցախի խորհրդարանն ընդունել է...

1-ին էջից

Համաներումը չի կիրառվի, մասնավորապես, ռեժիմի չարամիտ խախտումներ թույլ տված, նախկինում ներում կամ համաներում ստացած անձանց, հետախուզման մեջ գտնվող անձանց նկատմամբ (չնայած վերջիններիս համար որպես վերապահում՝ մինչեւ 2011թ. նոյեմբերի 1-ը սահմանվել է ներկայանալու ժամկետ, եւ որի դեպքում նրանք կարող են ենթարկվել համաներման), հանցագործությամբ պատճառված վնասը չհատուցած անձանց, ինչպես նաեւ մի շարք ծանր, առանձնապես ծանր, սահմանադրական կարգի եւ պետության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների համար դատապարտված անձանց, առանձնապես վտանգավոր կրկնահանցագործների նկատմամբ:

Ազատազրկման մեջ գտնվող անձանց նկատմամբ համաներման կիրառման վերջնաժամկետ է սահմանվել մինչեւ այս տարվա դեկտեմբերի 1-ը: Ըստ Ա. Լազարյանի, համաներմամբ ազատ կարձակվի ԼՂՀ-ում ազատազրկման մեջ գտնվող անձանց մոտ մեկ քառորդը, պատժից կազատվեն ազատազրկման հետ չկապված պատիժների դատապարտված բոլոր անձիք:

Ստանալով խորհրդարանի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի դրական եզրակացությունը, պատգամավորները համաձայնություն տվեցին նախագծին, որն ընդունվեց լրիվ տեքստով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի սեպտեմբերի 7-ին, ժամը 12:00–ին ՀՀ ք. Իջեւանում Իջեւանի գինու, կոնյակի գործարանի տարածքում տեղի կունենա գործարանի թորման արտադրամասի վերագինման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հասարակական լսումներ: Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ ք.Երեւան, Կոմիտաս 29 հասցեում: Հեռ. 22-14-85

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը վարձակալությամբ տրամադրում է տարածք՝

Հասցե	Ազատ տարածք (քմ)
ք.Երեւան Գ.Նժդեհի 23	նկուղային հարկ 45քմ.
ք. Երեւան Արշակունյաց 2ա	ձեղնահարկ 4 քմ.
ՀՀ Արմավիրի մարզ ք.Արմավիր Աբովյան փող 71	1-ին հարկ 7քմ.
ՀՀ Կոտայքի մարզ Ձորաղբյուրի համայնք Մ1 ջրհան կայան	111.3քմ. ընդհանուր մակերեսով ջրհան կայան

* Պետական սեփականություն հանդիսացող գույքը (տարածքը) վարձակալության է տրամադրվում ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության պետական կառավարչական հիմնարկների տիրապետմանը, տնօրինմանը եւ օգտագործմանը հանձնված (ամրացված) գույքի (տարածքի) վարձակալության կարգը հաստատելու մասին» 22.02.01թ. թիվ 125 որոշմամբ հաստատված կարգի համաձայն.

* Գույքը (տարածքը) ուղղակի ձեւով վարձակալության է տրամադրվում, եթե մամուլում եւ զանգվածային լրատվության մյուս միջոցներով հայտարարության հրապարակումից հետո առաջին հայտը ներկայացվելու օրվանից 10-օրյա ժամկետում այլ հայտեր չեն ներկայացվել, եւ դիմողը միանվագ վճարում է առնվազն 3 ամսվա համար հաշվարկված նվազագույն վարձավճարը, իսկ նշված 10-օրյա ժամկետում այլ հայտ կամ հայտեր ներկայացվելու դեպքում գույքը վարձակալության է տրամադրվում աճուրդով:

Այլ տեղեկություններ կարող եք ստանալ Վարչության ինտերնետային կայք էջից հասցե՝ www.privatization.am, կամ դիմելով ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն ք. Երեւան, Տիգրան Մեծի 4, 4-րդ հարկ, գույքի տնօրինման բաժին, հեռախոս 58-35-40:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

Հրապարակային ծանուցում

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը տեղեկացնում է

ԼՈՒԾԱՐԿՎՈՒՄ ԵՆ

«Վարդենիսի տպարան» ՓԲԸ՝ գրանցված ՀՀ պետական ռեգիստրի Վարդենիսի տարածքային բաժնում 21.08.1996թ., գրանցման համարը՝ 58.120.00122, վկայականի համարը՝ 01Ա027718:

«Էջմիածնի տպարան» ՓԲԸ՝ գրանցված ՀՀ պետական ռեգիստրի Վաղարշապատի տարածքային բաժնում 18.07.1995թ., գրանցման համարը՝ 38.120.00535, վկայականի համարը՝ 01Ա014523:

«Հրազդանի գրախանութների միավորում» ՊՓԲԸ՝ գրանցված ՀՀ պետական ռեգիստրի Հրազդանի տարածքային բաժնում 28.02.1996թ., գրանցման համարը՝ 33.140.00738, վկայականի համարը՝ 01Ա022876:

«Հուշարձանների վերականգնման «Կոտայք» արվեստանոց» ՊՓԲԸ՝ գրանցված ՀՀ պետական ռեգիստրի Հրազդանի տարածքային բաժնում 14.10.1996թ., գրանցման համարը՝ 85.140.00982, վկայականի համարը՝ 01Ա028874:

Պարտատերերը երկամսյա ժամկետում դիմեն ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն՝ լուծարման հանձնաժողովներին:

Հասցե՝ ք.Երեւան, Տիգրան Մեծի 4: Հեռախոս 52-65-57:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է ՀՀ Շիրակի մարզի Սառնաղբյուրի համայնքի՝ «Ցլկաններ» կոչվող սելավատարից (Գեսակից) ջրարբիացման նպատակով՝ 2,5 լ/վրկ եւ ոռոգման նպատակով՝ 38,0 լ/վրկ ջրառի նոր ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2010 թ. նոյեմբերի 9-ին, ժամը 16-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ բնապահպանության նախարարություն

ՀՀ ԱՄՆ Դեսպանատունը մրցույթի է հրավիրում

Ինտերնետային ծառայություններ մատուցող ընկերություններին:
Մրցույթային փաթեթները կարող են ձեռք բերել Ամերիկյան 1 հասցեում,
ԱՄՆ Դեսպանատան կենտրոնական մուտքից,
օգոստոսի 25-ից մինչեւ սեպտեմբերի 8-ը, ժամը 9:00 – 18:00-ն:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ՋԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝30.8.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: